№ 12 (165) XV ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ — ԵՐԿՐՈՐԴ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՈՉ ՇՆՈՐՀԻԱԾ, ԱՅԼ ԽԼԻԱԾ

„Ժողովուրդը տարաւ յաղթանակը. Թագաւորը անձնատուր եղաւ, բռնապետութիւնը այլ ևս չը կայ“— այդպէս էր ծանուցանում հեռագիրը մի փոքր առաջ այն օրից, երբ հրատարակւեց Թերթերի մէջ ազատութեան հրովարտակը, „շնորհւած“ Ռուսաստանի ժողովուրդներին արքայական գահի բարձրութիւնից։

„Ժողովուրդը յաղթեց, Թագաւորը անձնատուր եղաւ“... գեղեցիկ խօսքեր, սրտառուչ, ոգևորող։ Բայց դա, ի հարկէ, դեռ բաւական չէ իրական յաղթանակի համար՝ ընդդէմ այն վայրագ ռէժիմի, որ սրբագործել է անիրաւութեան, խոր արմատացած կամայականութեան և սանձարձակ բռնութեան տրադիցիաներով։ Նոյն վայրկեանին, երբ մենք գրում ենք այս տողերը, երկու մայրաքաղաքներում և Ռուսաստանի բոլոր խոշոր կենտրոններում մղւում է արիւնահեղ կռիւը հին և նոր ռէժիմի ներկայացուցիչների միջև։ Հին բռնապետութիւնը ընկաւ յանձին Պօբէդօնօսցէվի. բայց Տրէպօվը տակաւին իր պաշտօնի մէջ է և ինքնագլուխ դպտում է նոր կեանքի ազդարարներին։ Կռւի դաշտը մնաց ժողովրդին, սակայն բիւրոկրատիան դեռ անձնատուր չէ եղել, նա յետ է քաշւել դէպի նոր դիրքեր, որ նա շտապով ամրացնում է վիտտէական ազատամիտ րէֆօրմներով։

Ի՞նչ է պատրաստում առաջիկայ օրը,— ոչ ոք չէ կարող գուշակել։ Շարժումը ընդարձակւում է, կռիւը առաջ է գնում բոլոր գծերով, միշտ աւելի և աւելի բարդանալով անխուսափելի ընդհարումներով։ Յեղափոխականների կարմիր դրօշակների հետ ծածանւում են յետադէմների ճերմակ դրօշակները։ Սև-հարիւրակ կոչւող հիդրան բարձրացրել է գլուխը։ Բորբոքւում է քաղաքացիական կռիւ։ Օդի մէջ, որ լցւած է ազատութիւն երգող որոտընդոստ ձայներով, լսւում է արդէն՝ „զա՜րկ սօցիալիստներին, զա՜րկ ուսանողներին ու հրէաներին“։ Մի տեղ ապստամբ ժողովրդի կամքով բանտերի ծանր փականքներն են բացւում, ազատ արձակելով քաղաքական յանցաւորներին, մի այլ տեղ շառաչում են կօզակների նագայկաներն ու զինւորների գնդակները, հալածելով ցուցարարներին, կոտորելով յեղափոխութեան անձնւէր ռազմիկներին։

Կեանքը առաջ է մղւում շշմեցուցիչ արագութեամբ։ Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը ըսկսւած է։ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը հետևում է նրան բերկրանքով, բայց և դողացնող հարցումը շրթունքին. արդեօք վահանո՞վ, թէ վահանի վրայ...

Իսկական, լիակատար յաղթանակը, անշուշտ, պիտի գայ և գուցէ շուտ գայ։ Բայց ի՞նչ intermezzo կը նւագւի սպասողական այդ ծանր օրերում—ո՞վ կը խիզախէ մարգարէանալ։ Զ'օրօրենք, ուրեմն, մեր միտքը սրտառուչ խօսքերի և մեզ սիրելի նշանաբանների մեղեդիով։ Չը տկարացնե՛նք մեր յեղափոխական կամքը, յոյս տածելով թէ ցանկալի հետևանքը կը գայ ինքն իրեն՝ անկախ յամառ պահանջներից, անդուլ կռւից, հերոսական Թափերից և խիզախ անվեհերութիւնից։

Առաջին միտքը՝ որ երևան է գալիս Ռուսաստանի անցքերը և կայսերական վերջին մանիֆեստը գնահատելիս՝ արտայայտւում է հետևեալ պարզ ու անժխտելի բանաձևի մէջ. շնորհւած չէ, այլ յափշտակւած։ Յափշտակւած է միահամուռ յարձակմամբ, կռւով։ Թագաւորը անկամ, շտապ, երկչոտութեամբ կրկնեց այն նոյն նշանաբանները, որոնք ահա արդէն ամիսներից ի վեր աղմկում են ամբողջ Ռուսաստանը և մասամբ, փաստօրէն իրագործւած են արդէն։ Այն իրողութիւնը՝ որ այդ բոլորը յափշտակւած է և ոչ շնորհւած՝ երաշխաւորում է հեռաւոր աջողութիւնները, Թևաւորում է մեր յոյսերը դէպի կատարեալ ազատութիւն։ Յափշտակւած են, իրաւ է, առ այժմ միայն խոստումներ,—խոստում՝ ազատ մամուլի, խղճի ու խօսքի, խոստում՝ ջնջելու ոստիկանական կամայականութիւնները անհատի վրայ, օրէնքներ մշակելու ու հրատարակելու, խոստում ժողովրդական հսկողութեան և կառավարական պատասխանատւութեան—սակայն լոկ խոստումներով այժմ այլևս չեն խաբի Ռուսաստանի ժողովուրդներին։

Դրան ապացոյց այն ընդհանուր թերահաւատութիւնը, որ ցոյց աւեց կայսերական մանիֆեստի առթիւ ամբողջ մտածող ու գործող Ռուսաստանը։

Մանիֆեստը չը բերեց երկրին այն խաղաղութիւնը, որի վրայ նրա իսկական ու ֆիկտիվ հեղինակները յոյս էին դրել։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Հարց է տրւում, բնականաբար, ի՞նչպիսի կոնկրետ ձևեր պիտի առնէ ցարի մանիֆեստը։ Ինչպէ՞ս արդեօք կ'իրագործւի „ազատութիւն“ խօսքը, որ գահի բարձունքից ատամների կրճտոցով նետեց ժողովրդին Ռոմանովների մարող արքայատոհմի ամենախղճուկ ներկայացուցիչներից մէկը։ —Փորձով դատելով՝ շատ վատ. նա պիտի իրագործւի հին, ուժասպառ, ոչ ոքի չը գոհացնող ոստիկանական ճանապարհներով, կիսատ-պռատ, բիւրօկրատական խաբեայ բացատրութիւններով. կեղծութիւններով և անվերջ սահմանափակումներով, բնական է, ուրեմն, որ ժողովուրդը ինքը նւաճած լինելով իր ազատութեան իրաւունքը, ինքն էլ ձուլէ այն՝ իր ուզած ձևերի մէջ։

Եւ ժողովուրդը այդպէս էլ ուզում է անել, այդպէս էլ կարող է անել, այդպէս էլ անում է։ Նա իր ձեռքն է առել իր ճակատագիրը և քայլ. առ քայլ հեռացնում է այն խոչընդոտները, որոնք բարդւել են դարերի ստրկութեամբ, ապիրաւութեամբ ու բռնութիւններով, աշխարհիկ ու հոգևոր իշխանութիւնների խնամակալութեամբ, արքայական վոհմակների շնական ծաղրանքներով և ազատամիտ ճառերի քնացնող ժխորով։ Հերի՞ք է։ Վարագոյրը պատռւած է, մասկարադը աւարտելու վրայ. արթնացած, ապստամբ ժողովրդի կամքը ձգտում է տնօրինել իր ճակատագիրը այն ձևերի մէջ, որոնք համապատասխանում են նրա թափերին։

Պէտք է, ուրեմն, կանխել նոր խաբէութեան հնարաւորութիւնը։ Իսկ դրա համար մէկ միջոց միայն կայ, —Սահմանադիր ժողով (*Assemblée Constituante*), գումարւած ընդհանուր, հաւասար ու գաղտնի ձայնատւութեան հիման վրայ։ Չը սպասելով, որ կառավարութիւնը de facto նւիրագործէ իր խոստացած ազատութիւնները, անհրաժեշտ է օգտւել նւաճւած իրաւունքներից և գումարել միտինգներ, սկսել ընդարձակ ագիտացիա ժողովրդական մասսաների մէջ՝ Սահմանադիր Ժողովի համար պատգամաւորներ ընտրելու նպատակով։ Այդ էլ դեռ բոլորը չէ. ազատութեան մարտիկները պիտի պահանջեն և պահանջում են արդէն լիակատար ներում քաղաքական „յանցաւորների“ համար, այսպիսով կեանքի կոչելով յեղափոխութիւնից խլւած ռազմական ուժերը. նրանք պահանջում են հեռացնել քաղաքներից բռնապետութեան բաշիբոզուկներին, կօզակներին, զինաթափ անել զօրքերի մի մասը, կանխելու համար անմիտ արիւնհեղութիւնները, նրանք պահանջում են իրաւունք կազմակերպելու ժողովրդական միլիցիաներ, պաշտպանելու համար խաղաղ ազգաբնակութիւնը „հայրենասէր“ արշաւախմբերից և խուլիգանական պօգրոմներից։ Եւ որպէս զի այդ պահանջները մարմնանան կեանքի մէջ՝ պէտք է էլի կռիւ, պէտք են էլի զոհեր, պէտք են էլի մի քանի մասնակի յաղթութիւններ։ Երբ այդ էլ կը լինի—մէկ շաբթից, մէկ ամսից, ո՞վ կարող է ասել ե՞րբ—այն ժամանակ կարելի կը լինի դիմել Սահմանադիր Ժողովի գումարման, կատարեալ վստահութեամբ՝ որ նա ճշմարտութեամբ կը ցոլացնէ բոլոր ժողովուրդների քաղաքական կամքը։

Չը պէտք է միայն մոռանալ, որ Սահմանադիր Ժողովը գնացող պատգամաւորներին պիտի տրւի յատուկ ծրագիր „Օկրայինների“, Դայրերի մասին ընդհանրապէս և Կովկասի մասին մասնաւորապէս։ Այն դրօշակների վրայ, որոնցով նրանք մտնելու են Ժողովի մէջ, պիտի գրօշւած լինի հրեղէն տառերով այս նշանաբանը. ազատ ազգայնական ինքնաորոշում բոլոր ժողովուրդների համար, որոնք ապրում են Ռուսաստանի մէջ։

Չենք կասկածում, որ այդ բոլորը շաղկապւած է դժւարին ու յարատև կռիւների հետ։ „Հին ռէժիմը“ դեռ պիտի փորձէ պաշտպանել իր հեռաւոր, թէկուզ և անդամալոյծ, գոյութեան իրաւունքը։ Յետ նահանջելով յեղափոխութեան հզօր մղումների առջև, նա իրեն նեցուկ պիտի փնտրէ այստեղ ու այնտեղ, ռուս և ուրիշ ժողովուրդների յետամնաց, անգիտակից տարրերի մէջ, որոնց տակաւին չէ դիպել դաւադրական „թոյնը“։ Սակայն այդ բոլորը մի նշանախեց անգամ չէ խախտում մեր հաւատը դէպի բարեյաջող լուծումը այն կռւի, որ այնքան հպարտ, անձնուրաց ու համարձակ կերպով մղում է բողնդակ գիտակից Ռուսաստանը և մեր այդ հաւատը պտուղ չէ յափշտակութեան, այլ ուղիղ եզրակացութիւն այն բոլոր անցքերից, որոնք այսօր կատարւում են մեր աչքերի առջև։ Հաւատ չէ դա, այլ իրողութեան խոստովանութիւն։

„Ժողովուրդը տարաւ յաղթանակը“.—ոչ, իսկական, լիակատար յաղթանակը դեռ առջևնիս է, բայց նրա ճանապարհը բացւած է արդէն։

„Թագաւորը անձնատուր եղաւ“.—ոչ, դա անձնատրութիւն չէ, այլ պարտութիւն. թողնելով կռւի դաշտը ժողովրդին՝ նա անցել է դէպի մի այլ դիրք և նորոգում է իր ուժերը առաջիկայ ճակատամարտի համար, որ նա, իհարկէ, նոյնպէս տանուլ կը տայ։

„Ինքնակալութիւնը այլ ևս գոյութիւն չունի“.—ոչ, նա մարել է, ջլատւել, անդամալուծւել, բայց դեռ կենդանի է, թէև դժւարութեամբ է շնչում։ Նրան պէտք է ջախջախել և նա կը ջախջախւի։ Այն ժամանակ և կը գայ քաղաքական կատարեալ յաղթանակը։ Իսկ առ այժմ... կռիւ, կռիւ և կռիւ. ուրիշ ելք չը կայ։

„ԴՐՕՇԱԿԻ" ԹԵՐԹԱԳԻՐՆԵՐ

(ՌՈՒՍԱՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

ԲԱԳՈՒ, 3 Նոյեմբերի

Սահմանադրութեան մասին Պետերբուրգից այստեղ հեռագիր ստացւեց հոկտեմբեր 31-ին, առաւօտեան: Ամբողջ երկու օր քաղաքը ուրախութիւնից հրճւում էր՝ ժողովրդական առաջին յաղթանակի առթիւ: Նոյեմբերի 1-ին ցոյց անողների մի ահագին բազմութիւն, կարմիր դրօշակներով, շրջում էր քաղաքի փողոցներում: Ոգևորւած բազմութիւնը դիմեց դէպի բանտ, որտեղից այդ միջոցին պիտի ազատէին քաղաքական յանցաւորներին, բայց բանտի ռուս սպան առանց հրահանգի, ինքնագլուխ հրաման տւեց զինւորներին՝ կրակել ցոյց անողների և ամբոխի վրայ: Սպանւած են չորս, վիրաւորւած ծանր՝ ութ, թեթև՝ երեսուն հոգի: Սպան անմիջապէս ձերբակալւեց: Ոստիկանութիւնը աշխատում է գրգռումն առաջ բերել: Միապետականների դիրքը խիստ կասկածելի է:

—

ԲԱԳՈՒ, 4 Նոյեմբերի.

Նոյեմբերի 2-ին խուլիգանների մի խումբ, բաղկացած ռուսներից ու թուրքերից, թալանեցին հայերի 5 յայտնի խանութներ, այրեցին 12 տներ, որոնք բնակւած էին հայերով և պատկանում էին հայերի: Կօզակները փոխանակ ճնշելու չարագործներին, իրանք ևս մասնակցում էին թալանին: Հայերը ընդհարումն ունեցան խուլիգանների հետ: 35—40 զոհեր կան, մեծ մասամբ հայեր, որոնց թւում մի քահանայ: Հայերի կողմից եղած խիստ ազդարարութեան իբր հետևանք, նահանգապետը մի քանի միջոցներ ձեռք առաւ: Այս գիշեր զինւորները բռնեցին 7 թուրք, որոնք փորձում էին այրել հայ տները: Հայերը խիստ գրգռւած են: Դրութիւնը կրիտիքական է:

—

ԲԱԳՈՒ, 6 Նոյեմբերի

Հինգերորդ օրն է, քաղաքը գտնւում է խուլիգանների իշխանութեան տակ. այրում, թալանում, սպանում են. անթիւ զոհեր: Իշխանութիւնը թոյլ է, կամ ձևանում է թոյլ: Պրովօկացիան արհեստական է: Ամբոխին քշում են դէպի հայ տները, այնտեղ մի ատրճանակ արձակել տալիս և իսկոյն՝ իբրև ապստամբի՝ թնդանօթի բռնում ու ապա թալանի ենթարկում: Կօզակները մեծ անկարգութիւններ են անում՝ թոյլ չը տալով հայերին՝ ոչ դիմադրել և ոչ պաշտպանւել խուլիգանների յարձակումների դէմ:

ԹԻՖԼԻՍ, 7 Նոյեմբերի

Կայսերական մանիֆեստը առաջ բերեց այստեղ ահագին տպաւորութիւն: Երեք օր շարունակ բոլոր ազգութիւններից կազմւած՝ մի քանի հազար մարդ, առաջնորդութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան, Ռուս Սօցիալիստ-Յեղափոխականների և վրացական կուսակցութեան՝ կազմակերպում էին ցոյցեր, կարմիր դրօշակներով պտոյտներ անելով քաղաքի փողոցներում և յեղափոխական երգեր երգելով. ագիտատորները կրակոտ ճառերով դիմում էին ժողովրդին, վրացերէն, հայերէն ու ռուսերէն. յորդորում էին նրան պահանջել ամեն տեսակ ազատութիւն, պահանջել պատիժ հայկական ջարդերի հեղինակների համար: Դաշնակցական ֆէդայիների մի հարիւրեակ աչքի էր ընկնում թափորի մէջ իրենց դաշնակցական դրօշակներով: Ցոյցերը խիստ տխուր վախճան ունեցան. ուժգին ընդհարում տեղի ունեցաւ ցուցարարների և զօրքի միջև. կան բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորւածներ: Բագու և Շուշի՝ թուրքերը ոստիկանների ու խուլիգանների օգնութեամբ վերսկսեցին հայերի թալանն ու սպանութիւնները: Մեծ երկիւղ կայ նոյնիսկ Երևանի համար:

—

ԲԱԳՈՒ, 7 Նոյեմբերի

Նոյեմբերի 4-ին խուլիգանների խմբերը միացած կօզակներին և զինւորներին՝ յարձակւեցին, թալանեցին հայ տներն ու խանութները: Բայիլովում և Բիբի-Էյբաթում կան բաւական սպանւած ու վիրաւոր. ժողովրդի մի մասը ազատւեց նաւերի մէջ: Ծովային զինւորները, մօտ հազար հոգի, որոնք ժողովրդի կողմն էին, զինաթափ արւեցին և հսկողութեան տակ առնւեցան: Ընդհանուր նահանգապետը ցոյցերն ու համախմբումները արգելող հրաման արձակեց: Չը նայած դրան, խուլիգանների և հակացոյց անողների մի մեծ բազմութիւն ժողովւեց ռուսական մայր եկեղեցում, ուր քահանան և մի քանի պաշտօնեաներ ճառերով գրգռում էին ամբոխին հայերի դէմ. այնտեղից ամբոխը դիմեց դէպի նահանգապետի բնակարանը, որը չը նայելով իր քիչ առաջ արած կարգադրութեան՝ չը համախմբւել՝ թոյլ տւեց խուժանին շրջել քաղաքի փողոցներում: Շուտով թափառաշրջիկները լցւեցան հայ թաղերը և կօզակների ու զինւորների օգնութեամբ սկսեցին թալանել և հրդեհել հայ խանութներն ու տները, սպանելով բնակիչներին: Հրդեհւող տները ամբակոծւեցան: Առ այժմ գտնւած են չորսածխացած դիակներ, 17 սպանւած, բազմաթիւ վիրաւորներ:

Ժողովուրդը, թէև խիստ գրգռւած, սպառողական վիճակի մէջ՝ չէ ուզում դիմադրել խուլիգաններին. կարող են տեղի ունենալ սարսափելի անցքեր, եթէ նահանգապետը չը փոխէ իր ընթացքը: Երէկ և այսօր խռովութիւն չը կայ:

ՑԱՐԻԶՄԻ ՀՈԳԵՒԱՐՔԸ

Սահմանադրութեան ծանուցում. — *Habeas Corpus* — Ազատութիւն խօսքի ու խղճի, մամուլի ու գումարումների. — Օրէնսդիր Դումա. — Մինիստրական պատասխանատւութիւն.—Կռիւը շարունակւում է.—Պօբեդօնօսցեվ՝ հրաժարուած. — Յեղափոխութեան յաղթական ընթացքը.—Սև հարիւրակներ եւ մասսային ջարդեր.—Ֆինլանդիան նուաճում է անկախութիւն.—Յեղափոխութիւնը Լեհաստանում ու Կովկասում.—Սարսափը Պետերբուրգում:

Նահանջե՛ց... Այն հսկայ ուժը, որ դարերից ի վեր բռնակալօրէն խեղդում էր հարիւր միլիոնաւոր խաղաղ, կուլտուրական ազգաբնակութիւններին և որը Պետրոս Մեծի թագաւորութեան օրերից ի վեր, Նապօլէոնեան աշխարհակալութիւնների տենդով բռնւած, ամբարտաւան ու փքուն, ձգտում էր միշտ աւելի և աւելի ընդլայնել երկրագնդի վրայ իր բռնաւոր տիրապետութեան հորիզոնները, սուգ ու արտասուք ցանելով իր նուաճած ու նուաճելի երկրներում,—այդ ուժը այսօր ընկած է կատարեալ հոգեվարքի մէջ: Ժողովրդական բուռն, հուժկու գրոհի առջև ցարիզմը կիսով չափ անձնատուր եղաւ և ստորագրեց սահմանադրական մի

շարք կարևոր ազատութիւններ։

Թւում է երազ, անհաւատալի բանդագուշանք... Այնքա՞ն ընտելացել էինք միահեծան բռնապետութեան,—այդ վիթխարի ժանդարմի գոյութեանը, այնքա՞ն վարժւել էինք սանձարձակ բիւրօկրատիայի վայրենութիւններին... Սովորութիւնը ասես ըստեղծել էր մեր մէջ Չարիքի անվերջ ճակատագրական յարատևութեան տխուր զգացումը։

Խեղճ, անբախտ ժողովուրդնե՛ր։ Վերջապէս ծագեց ձեզ համար նոր օրերի արշալոյսը, սկիզբ դրւեց բազմամիլիօն Ռուսաստանի համար քաղաքակրթական անկաշկանդ առաջադիմութեան... Դեռ կռիւ կայ սակայն, դեռ շա՜տ ճակատամարտներ պիտի մղել, Ազատութիւնը կատարեալ դարձնելու համար, բայց դժւարին յաղթանակներից մինը տարւած է...

Պատմական մեծ վայրկեաններ ենք ապրում, որ լի են միլիօնաւոր ծանրակշիռ հետևանքներով... „Դուռը բացւում է և Հայաստանի ազատագրութեան“։ Ա՜հ, այս խորհրդաւոր, նշանակալի խօսքերը, որ Ֆրիդրիխ Էնգելս ուղղում էր, սրանից 12 տարի առաջ, Շտուտգարտի մի խումբ հայ ուսանողների... „Տաճկահայաստանի և ընդհանուր հայութեան ազատագրութեան ժամը այն օրը միայն կը հնչէ, երբ կը տապալւի ռուսական բռնապետութիւնը“,—այսպէս էր գրում 12 տարի առաջ Մարքսի համբաւաւոր զինակիցը։

Մարգարէի խօսքե՜ր... Ո՞վ չը գիտէ, որ մեր յօշոտւած ազգայնութեան բոլոր հատւածների վրայ մինչև օրս տիրականօրէն ծանրացած էր նոյն քստմնելի բռնապետութեան թաթը, որ Հայոց Հարցի արիւնալի վախճանը, օսմանեան հայութեան տխեղերասասան մարտիրոսութիւնը դարձեալ այդ ուժի դիւային խաղերի արդիւնքն էին, նրա աշխարհաջինջ քաղաքականութեան կապրիզները։

Ո՞ւմ համար գաղտնիք է, որ վերջին 15 տարւայ ընթացքում հայ յեղափոխական շարժման թափերով յարուցւած եւրոպական միջամտութիւնները սիստէմատիկօրէն անդամալոյծ եղան, միմիայն շնորհիւ Պետերբուրգի թունաւոր ազդեցութեան, Պոբէդօնօսցէվների, ամբողջ ցարական կամարիլլայի սիստէմատիկօրէն առաջադրած non possumus-ին...

Միահեծան բռնակալութեան կատարեալ տապալումը թերևս միայն շաբաթների հարց է... Շատ են, անշուշտ, հրատարակւած Սահմանադրութեան պարապները, չը կայ ընդհանուր ընտրողական իրաւունք, որ խարիսխն է ճշմարիտ ժողովրդական գերիշխանութեան, չը կան դըրական երաշխաւորութիւններ, թէ խոստացւածը կ'իրագործւի, թէ ցարի բերանով հռչակւած մամուլի, խօսքի, խղճի, գումարման ազատութիւնը, Habeas corpus-ը, և պարլամենտարիզմի էական սկզբունքները՝ ժողովրդական ընտրեալների ձեռքով մշակելի օրէնսդրութիւնը և մինիստրների պատասխանատւութիւնը այդ ընտրեալների առաջ—անարգել կը գործադրւին։ Պակասում է շատ բան, սակայն եղածն էլ այնքան շօշափելի է, յեղափոխական շարժման յաղթանակը այնքան ակներև, և, մանաւանդ, այդ շարժման տեմպօն այնքան յուսատու, այնքան խրոխտ ու անդիմադրելի, որ իրաւունք ունենք կատարեալ հաւատով սպասել վաղւան օրին, երբ սարսափահար կամարիլլան և նրա օգոստափառ խրտւիլակը, զիջում զիջման ետևից ծանուցանելով, կատարելապէս յետ կը նահանջեն, անձնատուր կը լինեն։ Երբէք այլևս հնարաւոր չէ վերադարձը դէպի հին ռէժիմը...

Ազատութեան առաջին էտապը նւաճւած է. այժմ մնում է—օգտւելով խլւած ազատութիւններից ու արտօնութիւններից—սկսել տենդային գործունէութիւն և զինաւորւած հասարակական գիտութեան վերջին խօսքով՝ առաջնորդել ժողովուրդներին միշտ դէպի վեր, դէպի քաղաքական ու հասարակական կենցաղի աւելի և աւելի կատարեալ ձևեր...

Բռնապետութեան կազմալուծումը Ռուսաստանում անհունօրէն ծանրակշիռ մի իրողութիւն է մասնաւորապէս հայերիս համար։ Շատ բան կը փոխւի, և գուցէ նոյնիսկ շատ մօտիկ ապագայում... Մենք պիտի գործենք Ռուսահայաստանի մէջ բոլորովին նոր պայմաններում և այդ նոր վիճակը, անտարակոյս, պիտի անդրադառնայ Տաճկահայոց խնդրի վրայ ևս, Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան ու տաքտիկի վրայ։

*

Նոր մանիֆեստը ցարի բերանով ազդարարում է.

1. Տալ ազգաբնակութեանը քաղաքացիական ազատութեան անփոփոխելի խարիսխները, հիմնւելով անհատի իրական անձեռնմխելիութեան վրայ. ազատութիւն խղճի, խօսքի և գումարումների։

2. Առանց յետաձգելու ընտրութիւնները պետական Դումայի համար, հրաւիրել մասնակցելու Դումային—որքան թոյլ կը տայ մինչև այդ ժողովը մնացած կարճ ժամանակամիջոցը—ազգաբնակութեան այն դասակարգերը, որոնք ներկայումս զրկւած են ընտրողական ամեն իրաւունքից, թողնելով այնուհետև նորահաստատ օրէնսդիր իշխանութեանը՝ իրագործել ընտրողական իրաւունքի հեռաւոր առաջադիմութիւնները։

3. Սահմանել, իբրև անփոփոխելի կանոն, որ ոչ մի օրէնք չէ կարող մտնել զօրութեան մէջ, առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդի ընտրեալները պէտք է հնարաւորութիւն ունենան իրապէս մասնակցել հըսկելու՝ մեր նշանակած իշխանութիւնների գործողութեանց օրինաւորութեան վրայ։

Ելէքտրական արագութեամբ նոր Սահմանադրութեան լուրը թափանցեց կայսրութեան բոլոր ծայրերը. մի վայրկեան ցնծաց ապստամբների միլիօնաւոր բանակը, իր ուժի ու յաղթութեան գիտակցութեամբ, ապա նոր թափով յորձանք տւեց ու գոռաց բռնապետութեան ականջներին. „մեզ երաշխաւորութիւննե՛ր են պէտք, մեզ պէտք են քաղաքական լիակատար ազատութիւններ, պէտք է ընդհանուր, լիակատար ամնիստիա, Սահմանադիր ժողով և այլն“...

Յեղափոխութեան յաղթանակի ուրւականից զարզանդած՝ արքայական պալատի մշտարնակ դէմք, 25 տարւայ անհոգի տիրան-Պոբէդօնօսցէվը հրաժարական տւեց... այս անգամ ընդմիշտ։

Նրա հետ գնացին Պետերհօֆի մի քանի ուրիշ ազդեցիկ հիւրեր, որոնք այժմ արդէն կորցրել են իրենց

ազդեցութիւնը խղճուկ, սարսափահար վեհապետի վրայ...

Յեղափոխութիւնը առաջ է գնում յաղթականօրէն։ Համաշխարհային պատմութեան մէջ չը տեսնուած իրողութիւն... Արիւնահեղ կռիւներ, մեծ ճակատամարտներ չէք տեսնում այդ հսկայական դրամայի մէջ։ Դա աւելի շուտ՝ տասնեակ միլիոնաւոր բանուորների, երկաթուղային ծառայողների, ուսանողների ու ամեն տեսակ „մտաւորականների“ կրաւորական մի դիմադրութիւն է, բայց յամառ, անվկանդ դիմադրութիւն — յարատև գործադուլների, մասսային հոյակապ ցոյցերի միջոցով։ Ամբողջ շաբաթների ընթացքում վիթխարի կայսրութեան մէջ՝ Ֆինլանդիայից մինչև Կովկասեան լեռնաշղթան, գերմանական սահմանագլխից մինչև Սիբիրի խորքերը՝ տնտեսական կեանքը կանգ է առել, դադարեցնելով գործունէութիւնը բոլոր միւս աշխարհներում։

Սակայն ահա կամաց-կամաց սկսւում են և արիւնալի ընդհարումները։ Ամբողջ հարաւային Ռուսաստանում հռչակաւոր Սև-հարիւրակը յանդուգն գլուխ է բարձրացրել և անխնայ ջարդում է հրէաներին։ Նոյն խուլիգան տարրերը, կառավարութեան ակներև հովանաւորութեան տակ՝ փորձեցին մայրաքաղաքներում ևս գրոհ տալ յեղափոխականների դէմ, բայց բիրթները ջարդուած՝ ամօթով փախան։

Դէպքերը գահավիժում են անասելի արագութեամբ. իւրաքանչիւր ժամին հեռագիրը ծանուցանում է յեղափոխական շարժման նոր վճռական հարուածների մասին։ Ֆինլանդիան ամբողջապէս ոտքի է կանգնել և քշել է ուզում ռուսական ամենայետին պաշտօնեային։ Լեհաստանը ինքնավարութիւն է պահանջում. Կովկասը... չը գիտենք որոշապէս, թէ ինչ է կատարւում այս րոպէիս կովկասեան արհաւրալի քաօսի մէջ... բայց ամեն տեղից, ամեն մի անկիւնից ազատութեան կուռ շռինդն է լսւում, որ վաղուան մեծ, անխուսափելի յաղթանակն է աւետում։ Ցարը ահաբեկւած, բիւրոկրատեան յուսակտուր ու խելակորոյս՝ պատսպարուել են Վիտտէի թևերի տակ, որը նոյնպէս մնացել է շշմած ու վարանոտ՝ իր կատարեալ անճարութեան մէջ...

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

I

Մինչ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ մեն-մենակ կռւի դաշտում՝ ընդհարւում է վայրենի հրոսակների հետ, ձգտելով բոտ կարելւոյն շուտ վերջ դնել մի քստմնելի ողբերգութեան, ուր նա վատնում է և՛ իր թանկագին ուժն ու եռանդը, և՛ իր պատկառելի հմայքը, իբրև ազատութեան համար մարտնչող գործօն, — դուրսը, հասարակական անմասն շրջաններում՝ հայ և օտար՝ շարունակում են դիտանօզի ենթարկել սև իրողութիւնները, շարունակում են փնտրել պատճառները և մերկացնել ու խարազանել պատասխանատու հեղինակներին։

Եւ որքա՛ն ծանր է, որքա՛ն շշմեցուցիչ է ժողովրդական ճգնաժամն ապրող կազմակերպութեան համար՝ երբ նա մի վայրկեան աչքերը դարձնելով արիւնոտ կրկէսից, ականջ է դնում մարդկանց դատաստանին։ Որքա՛ն վշտաւիթ է հայ ինտելիգենտ զինւորի համար՝ տեսնել այդ գիտուն ու խորհրդաւոր դատախազներին, որոնք իրենց կոյր, յախուռն, կրքոտ դատավճիռների մէջ յաճախ մոռանում են ճշմարիտ ոճրագործին, իրենց վեր հանած պատճառների շարքում գրեթէ մոռանում են մայր-պատճառը։

Բանականութեան փաստաբան մամուլը և ազգի անունով ճառող ինտելիգենցիան, ռէակցիայի մարմնացում ուժերը և յեղափոխական սօցիալ-դեմ. կրատները միանում են մի արտաշարժ համաձայնութեան մէջ, մէկ նշանաբանով, որի ընդհանուր իմաստն այն է՝ թէ „զոհերը իրենք են մեղաւոր, պէտք է խարանել իրենց զոհերին“...

Բուն յանցաւորները չքանում են հրապարակից կամ նրանց համար փաստաբանւում են մեղմացուցիչ հանգամանքներ և մեծագոյն յանցաւորը յայտնւում է, ընթերցող, դարձեալ նոյն ուժը, նոյն յաւիտենապէս ամբաստանւած ուժը, որ տագնապի ժամին առանց վարանելու նետւում է կրակի մէջ՝ ժողովրդի դատին նեցուկ կանգնելու և հակառակորդի արիւնարբու բնազդումները սանձահարելու համար...

Ռուսական դատողութեան ղօհարնե՛ր.. Պատմութիւնը կրկնւում է — և ամբոխը, կրթւած թէ անկիրթ, ամեն տեղ ու ամեն ժամանակ մնում է հաւատարիմ իր ներքին բնութեան։

Դիմենք պատճառներին։

Ողբալի չէ՞, որ ստիպւած ենք հերքումներ բերել այնպիսի այլանդակ պարադոքսների, որոնց համեմատ՝ Անդրկովկասեան աղէտների պատճառ հանդիսանում են՝ կամ հայի տնտեսական կեղեքումներն ու թուրքի տնանկ, անճար վիճակը, կամ հայկական նացիոնալիզմը և մասնաւորապէս հայ յեղափոխական կազմակերպութեան ուլտրա-ազգայնամոլ հաւատամքն ու ընթացքը, սխալ տակտիկան, նրա գրգռումներն ու պրովոկացիաները թուրք ազգաբնակութեան ու կառավարութեան դէմ, համերաշխութեան ոգու բացակայութիւնը և այլն և այլն։

Տնտեսական կատեգօրիայի վրայ ծանրանում են գրեթէ բացառապէս օտարները։ Երբ, դեռ սկզբում, համաշխարհային մամուլը արձանագրում էր Բագւի մէջ տեղի ունեցած սարսափները, նա ուրիշ բացատրութիւն չէր գտնում խաղացւող ողբերգութեան համար, բայց եթէ ռասային և մասնաւորապէս տնտեսական հակամարտութիւնը. հայերը ներկայանում էին գայլերի դերում, թուրքերը՝ ըմբոստացող գառների դերում։

Սօցիալիստական օրգաններն անգամ, ցարիզմի դաւերը նշաւակելով հանդերձ՝ չեշտում էին տնտեսական փակտորի վրայ. Նոյնիսկ ժօռէսի *Humanité*-ն, որ սովորաբար ցոյց է տալիս պայծառ ու անկախ դատողութիւն, ազատ՝ թէօրիաների յախուռն ու շաբլօնական կիրառման տենդից — ժօռէսի օրգանը, տպագրելով „Դրօշակի“ խմբագրութեան կոչը լուսաւոր աշխարհի քաղաքացիներին և դրւատելով նրա հիմնական պատճառաբանութիւնը, հարկ է համարում աւելացնել թէ՝ „մեր հայ ընկերները, այնուամենայնիւ, չը պէտք է ուրանան, որ թուրքերը դժգոհ լինելու պատճառներ ունեն, որ նրանք հողի առաջին գրաւողներն են (*Les premiers occupants*), որ նրանց զրկել են“ և այլն... Դարձեալ քաղաքավարի ակնարկներ հայ տարրի իբր ճնշող ու ստրկացնող դերի մասին։

Սօցիալիստական մամուլը դատում է անալոգիայով, նմանութիւններով։ Ազգային ընդհարումները, նրա ըմբռնումով, բորբոքւում են քաղաքակրթւած երկրներում մեծ մասամբ տնտեսական մրցակցութեան հողի վրայ։ Այդպէս է ցեղական պայքարի կլասիկ աշխարհում, — Աւստրօ-Ունգարիայում, ուր թէ առանձին համայնքների փոխադարձ անվերջ թշնամութիւնները և թէ բոլորին ան-

խտիր վարակող անտիսեմիտիզմը, հակահրէական մոլեգին արշաւանքը, սոցիալիստների կարծիքով, պատճառաբանւում են, վերջին քննութեամբ, նոյն տնտեսական մրցակցութեամբ։

Սոցիալիստները — ոչ բոլորը, — մտածում են, որ comparaison n'est pas raison, որ համեմատութիւնը դեռ փաստող հիմք չէ. դատելով մեծ մասամբ à priori, փաքր ինչ թեթևութեամբ ու լոկ նմանութեան օրէնքով, ի նկատի ունենալով, որ մարդը նոյն մարդն է երկրագնդի բոլոր ծայրերում, նոյն էական բնաղդումներով ու ախորժակներով, նրանք շտապով եզրակացութիւն են հանում, առանց լրջօրէն հաշուի առնելու մեր երկրանութեան բոլոր սարսափեցնող տրագիզմը, առանց իմանալու մեր միջավայրի առանձնայատուկ, բացառիկ պայմանները, առանց լիովին գնահատելու և՛ մեր բաւիբ զուկ կառավարութեան խեղդող ռէժիմը, և՛ մեղ շրջապատող խուժանների դժոխային պատկերը, ուր մտաւոր ամայութեան հետ իշխում է զազացումների մի ան բրնակ դժնդակութիւն, ուր անհուն տգիտութեան հետ ցոլում է և համատարած գարշանք... Գտե՛ք, գտէք երկրագնդի վրայ մի ուրիշ անկիւն, ուր գոյութեան կռիւը սան սր այնքան պլանդակօրէն բիրտ, զուտ բիոլոգիական բնաւորութիւն, ուր կենդանաբանական մնացորդները այնքա՜ն ուժգնութեամբ զրալ տային իրենց գոյութեան մասին, ուր կուլտուրան ու բարբարոսութիւնը այնպէս իրարու խրճոպէին, այնքա՜ն անհաւասար, ահեղ, անիծուած մի մենամարտում.. Անցնենք։

Տնտեսական են հայ-թրքական ընդհարման պատճառները, — այսպէս էին ասում սկզբներում և կովկասաբնակ մի կարգ ռուս հրապարակախօսներ։ Բազի առաջին կոտորածից յետոյ նրանք փաստեցին, որ թուրքերի շարժումը առաջ է գալիս նրանց խեղճութիւնից, նրանց հողազուրկ ու իրաւազուրկ լինելուց, որ թուրք խուլիգանների „բողոքեասանների“ սուար շարքերը ծնունդ են քաղաքային ազգաբնակութեան պրոլետարիացման։

Պայթեց ուրագանը Երևանեան նահանգում, տիրոջ Նախիջևանի գաւառը դարձաւ թրքական ապստամբութիւնների թատերաբեմ, — և տնտեսական մեկնաբանութեան ներկայացուցիչները յետ քաշուեցին, այլ ևս չը ծանրացան պրոլետարիզացիայի և նրա հետևանքների վրայ... Հայոց միջավայրին իսպառ անտեղեակ թէորետիկոսները համոզուեցին, որ բողոքեասանները թուրք ժողովրդի մէջ, տարաբախտաբար, կղզիացած խմբեր չեն, որ չքաւոր, թէ ապահով՝ թուրքերը հակած են դէպի խուլիգանութիւն, որ մահմեդական ազգաբնակութեան լայն զանգուածները պատրաստ են ամեն վայրկեան պատեհ առիթով գրոհ տալ անպաշտպան հայ ժողովրդի վրայ և բարդոլիմէոսեան գիշերներ սարքել à la Մինքենդ...

Երկար փաստերի ետեւից ընկնելու պէտք չը կայ հաստատելու համար, որ յամենայն դէպս չքաւորութիւնը չէ թուրքաց բռնկումների շարժապատճառը. — բաւական է յիշել բէկերի և աղաների, մոլլաների և ինտելիգենտ կոչւող արիկաների դերը, վճռական դերը, այս յարատև դրամայի մէջ, բաւական է յիշել նոյն բէկերի վայելած հռչակը, նրանց բռնած խոշոր տեղը կովկասեան աւազակութիւնների տարեգրութեան մէջ. բաւական է վերջապէս յիշել, որ հայ մասսան նոյնքան չքաւոր է, նոյնքան հողազուրկ և աւելի հալածուած, քան իր հարևանը, մուսուլման ամբոխը, որ բազմաթիւ գաւառների մէջ — Սուրմալուի, Նախիջևանի, Էջմիածնի, Գանձակի, Շամախու և այլն — հողերը գանուում են թուրք բէկերի ձեռքում, որ նոյնիսկ նաւթային արդիւնաբերութեան շրջանում իշխողը, սեփականատերը աւելի շատ թուրքն է, քան իր կուլտուրական հակառակորդը, — մի բան, որ այժմ արդէն շեշտուում է շարունակ եւրոպական մամուլի մէջ, շնորհիւ թղթակիցների ուշադիր ու անաչառ ուսումնասիրութեան։ Այս բոլորը անգիտանում էին մեր իրականութեան վրայ հանդիսաւորապէս դատողները։

Դարձեալ մեղաւոր էր պդտեղ յախուռն դատողութիւնը և անալոգիայով տրամաբանելու ձևը։ Մարդիկ թէորիապէս պատաստում էին մեր միջավայրին արևմտեան կեանքի իրողութիւնները և ապա նրանց սովորական ֆորմուլների տակ էին ձգում քանի որ արևմտեան Եւրոպայում, մասամբ և Ռուսաստանում, թալանի ու սպանութեան ծարաւի խուլիգանները ծնունդ են ազգաբնակութեան պրոլետարիզացիայից, — ինչո՞ւ չը յայտարարել, որ թուրք խուլիգանների լեգիոնները ևս ծնունդ են նման երևոյթների։

Այս մեծ մասամբ այսպիսի անհեթեթ եղանակներով են քննում մեր դժբախտ իրականութիւնը նրանք՝ որոնք կոչուած են տեղական ուժերի հետ ձեռք ձեռքի տուած առաջնորդելու երկիրը դէպի ազատութիւն ու բարօրութիւն։

Սխալ լուսաբանութիւնները, ոչինչ ի հարկէ, եթէ մնում են սխալ լոկ թէորիայի աշխարհում. — բայց նրանք ցոյց են տալիս իրենց վնասակարութիւնը և դրծնականիմէջ, քանի որ խրախուսում են մեր թշնամիներին՝ թուրք համիդականներին և նրանց հովանաւոր ցարի կառավարութեանը, փաքրացնելով սրանց յանցաւորութեան չափը։

Սակայն տնտեսական բացատրութիւնները, իրենց բոլոր անհեթեթութեամբ հանդերձ, անմեղ բաներ են, համեմատած այն մեկնութիւնների հետ, որ յետոյ եկան։ Նոյն մարդիկ, կամ նրանց համախոհները սկսեցին իրենց կուսակցութեան արտաքսումների օրգանների մէջ այլ երգ երգել։ Սկսեցին „Մոսկովսկիա Վեդոմոստի“-ի և „Նովոյէ Վրեմիա“-ի խաղալ, նրանց պէս արշաւել հայկական շարժման դէմ, ամբաստանութիւններ ու ինսինուացիաներ ուղղել հայ գործիչներին. les extremités se touchent. „Մեղաւոր են ամեն բան՝ ում Դր շակեանները, — յայտարարեցին նրանք. ազգտների պատճառը հայ կոմիտէների շովինիզմն է, նացիոնալիզմը“...

Մենչդեռ „նովոյէ Վրեմիա“-ն փրփուրը բերանին յոխորտում է „փաքրիկ յանդուգն ժողովրդի դէմ, որ կռիւ է հրատարակել երեք պետութիւնների“, — „Մոսկովսկիա Վեդոմոստի“-ն կատաղութեամբ շանթեր է թափում Հ. Յ. Դաշնակցութեան վրայ։ Իր № 244-ում կատկովի արժանաւոր ժառանգը հետեւեալն է գրում, ի միջի այլոց.

„Թուրքերը տառապող կողմն են... Խաբեայ ու վանառուած ձայները (ակնարկւում են հայ յեղափոխականները) ցեխոտել են ուղուս Ռուսաստանի աւանդականօրէն հաւատարիմ հպատակ՝ երեք ու կէս միլիոն թուրք ազգաբնակութիւնը, խախտելով նրա մէջ գաղտագողի մարդասպանների անջատական հակումները, ի վնաս ռուս կայսրութեան անդորրութեան ու ամբողջութեան։ Եւ, ինչպէս միշտ, արիւնոտ դիւթիւնները աշխատում են զցել ռուս կառավարութեան վզին։ Անմ մի Ռուլուած Կովկասի մէջ ամենատարածուած Հայկական Կոմիտէի — Դաշնակցութեան — մի պրոկլամացիայից“...

Առաջ է բերուած Կովկասեան մեր մի կենսրօնական մամլի թռուցիկ — կոչը, ուղղուած թուրքերին, ուր վերջիններս՝ մարմինը յորդորում է ճանաչել իսկական թշնամիներին ու յետ կենալ եղբայրասպան կռուից։

„Մեղաւորը հայ յեղափոխականներն են“ — այդ անամօթ նշանախօսքը չէ՞, որ կատաղութեան փրփուր է հանում Դաշկովների, Փադէեվների ու Սվէչոլոներների շրթունքներին. նա չէ՞, որ միևնոյն ժամանակ թէ է տալիս կովկասեան Կրուշեվաններին և մահմեդական վայրագ խուժանին, որոնց այնքա՜ն հաճելի է յեղափոխականների կարծեցեալ մեղքերով վարագուրել իրենց զազիր շահատակութիւնները։

Բայց... թուրքը թուրք է, բիւրկրատն էլ բիւրոկրատ է. ոչ թուրք խուժանից ու Աղայեվներից, ոչ Դաշկովներից ու Սվէչոլոներից, ոչ էլ բռնապետութեան դրամիդ կազմող ազատ մամուլից՝ մենք չենք պահանջում, չենք կարող պահանջել ամենիս, շիտակ վերաբերմունք դէպի հայ կոմիտէների գործունէութիւնը և նրա հետ կապած հրատապ խնդիրները... Մեզ համար միայն անընդունելի է, որ այդ սև բանակի խաղն են խաղում — թէկուզ և տարբեր նկատումներով — հասարակական լաւագոյն տարրերը, ամենաարմատական ներկայացուցիչները։

„Դրօշակեանները են մեղաւոր“ — մի՞թէ այդպէս չեն ազդակում ամիսներից ի վեր Կովկասում հաստատուած ռուս սոցիալ-դեմոկրատ կազմակերպութիւնները և. մի՞թէ կուսակցական անարգացնող կուրութիւնը թոյլ է տուել երբ և իցէ այդ կազմակերպութիւններին, նրանց օրգաններին՝ որ և է արդար, ճիշտ ու նպաստաւոր խօսք արտասանել այն մարմնի մասին, որը իրենց իսկ վկայութեամբ՝ „ցանցով պատել է Անդրկովկասի հայաբնակ գաւառները“։

Նրանք վազուց արդէն կնքել են այդ մարմինը „նացիոնալիստ“ ու այլ նման ածականներով, բռնել են նրա դէմ

միանգամայն բացասական դիրք—թէկուզ և այդ ընթացքով յաճախ իրենք իսկ յայտնուեն բացասական դիրքում՝ դէպի հայ ժողովրդական դատի պահանջները և նրա հետ կապուած բարձր գաղափարները։

Ինչպէ՞ս կարելի էր հանգիստ թողնել „Դաշնակցութիւնը“ մեծ, անսովոր աղէտների պատճառները քննելիս. անշուշտ, նա դեր խաղացել է այդ աղէտների մէջ և, իր բնութեան համեմատ, բ ա ց ա ս ա կ ա ն դ ե ր։ Նա խօնոյիստ, թէթեւ, ազգայնամոլ ու յարձակողական ձգտումներով բռնուած մի կազմակերպութիւն, անտարակոյս, իր պատասխանատուութեան բաժինն ունի Թուրք ամբոխի զայրացնութեան ու մոլեգնոտ ցնցումների մէջ. հայ նացիոնալիստները, անշուշտ, գրգռել են. .

Այդպէս պ է տ ք է լ ի ն է ր այն բոլոր մարդկանց երեւակայութեան մէջ, այն բոլոր գործիչների ըմբռնումով, որոնք ծանօթացել են „Դաշնակցութեան“ հետ թռուցիկ, հատ ու կտոր, մակերեսային զրոյցներից։

Եւ ահա անողորմ խարազանումներ։ Ահա յախուռն դատավճիռներ, ուր իզուր կը փնտրէք ազնուութեան, անաչառութեան ստուերն անգամ։ Դաշնակցութեան դերը էապէս բացասական է, հակաժողովրդական։ Նա դրական ու օգտակար ոչինչ չունի իր գործունէութեան մէջ. ինչ որ արուած է ժողովրդի ինքնապաշտպանութեան, զինման ու առաջնորդութեան համար՝ արել են ուրիշները... Դաշնակցութիւնը անհետացել էր նոյն իսկ փետրուարեան օրերում. նա չէր, որ ջարդելով յետ մղեց վայրենի խուժանը և կնքել տուեց հաշտութիւնը. ոչ, սօցիալ-դեմօկրատական „Իսկրա“-ի վկայութեամբ՝ փետրուարեան օրերում Բագուն պաշտպանել են „բոլոր ազգութիւններից“ կազմուած կամաւոր խմբերը. . .

Ի՞նչ անել, ընթերցող։ Ճշմարտութեան այլանդակ խեղաթիւրումներ կան, որոնց առջև ակամայ զինաթափ էք լինում և տրւում բացառապէս զզուանքի զգացման։ Կուզէինք, որքան կուզէինք տեսնել, վերջապէս, հակառակորդ մի մարմին, որ ցոյց տար ազնիւ ու շիտակ վերաբերմունք դէպի իրողութիւնները, դէպի Դաշնակցութեան կատարած դերը... Առաջ գնանք։

Դաշնակցութիւնը միայն գրգռում է, նա միայն վնասում է։ Եթէ անգամ նա իր ձեռքն է առնում աւերի ու սարսափի մատնուած նաւթաշրջանը—դարձեալ վնասում է։ Նա դրանով իսկ գ ր գ ռ ո ւ մ է, նա իր պաշտպանողական գործունէութեամբ իսկ աղբիւր է դառնում կառավարական խստութիւնների, Թրքական արշաւանքների և ջարդերի։ Այդպէս է տրամաբանում, օրինակ, „Պրօլետարի“ թերթը, ռուս սօցիալ-դեմօկրատիայի մի այլ օրգանը։ Չափազա՜նց բնորոշ է այդ յայտնութիւնը մեր հակառակորդների ընդհանուր նկարագրի համար, ուստի մենք այն առաջ կը բերենք ընդարձակ քաղուածով.

„Ռուսները լուռ են և քթի տակ հայհոյում են հայերին, որպէս ամբողջ խռովութեան հեղինակներին։ Բանւորական լայն մասսաները, ճնշուած անաշխատութիւնից ու ըսպառնացող սովից, փնտրում են մեղաւորին և ակամայ փնտրում են նրան մօտիկում. .

„Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բագւի կոտորածի օրերում) իրենց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ Դրօշակեանները, հաստատում է իմ կարծիքով միայն այն՝ որ կառավարութեան տաքտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—յաջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւններ, որոնք իրենք իրենց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական նպատակներ։ Թո՛ղ լինէր Բագւում հարիւր ռուս բանւոր, հրացաններով զինուած—նրանց երեւան գալը և գործօն միջամտութիւնը կունենար ահագին քաղաքական նշանակութիւն և հայերին աւելի կը տար, քան թէ կարող են տալ հարիւրաւոր լաւ զինուած դրօշակեաններ“...

Մի մեծ կուսակցութեան կենտրոնական օրգաններից կարելի է պահանջել երեւոյթների լուսաբանութեան մէջ փոքր ինչ աւելի լրջմտութիւն... Ռուսական սօցիալ-դեմօկրատները, որ սրտացաւ ականատես էին հայ ազգաբնակութեան խողխողելուն, անտարակոյս, սօցիալիստական վեհանձնութեամբ հրապարակ կը նետուէին ու վերջ կը դնէին մարդկային դարշելի սպանդանոցին, խլելով հայ ժողովրդի պաշտպանութեան գործը նացիօնալիստ Դրօշակեանների ձեռքից, որոնք ընդունակ են միայն պատճառ դառնալ նորանոր ջարդերի ու աւերումների։ Ռուս սօցիալ-դեմօկրատները անշուշտ կ՚անէին այդ, եթէ միայն... զէնք ունենային։

Լաւ ականջ դրէք.

„Որքան և ցաւալի է, բայց պէտք է արձանագրել, որ աղէտի ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ յայտնապէս և ակտիւ կերպով հրապարակ չ՚եկան՝ ոչ կուսակցական կոմիտէն (խօսքը սօցիալ-դեմօկրատ Մեծամասնութեան կոմիտէի մասին է), ոչ էլ Փոքրամասնութեան միութիւնը... Նրանք երկուսն էլ ոչնչով ցոյց չը տւին իրենց։—Իր այդ կրաւորական դիրքը կոմիտէն բացատրում է անյաջող անցած գործադուլով, որը պիտի կայանար աղէտի նախօրեակին, բայց գլխաւորապէս զինուորման պակասութեամբ“։

Մի դժբախտ գործադուլ „աղէտի նախօրեակին“, երբ Թուրք խուժանը հասել էր բորբոքման գագաթնակէտին, երբ բաւական էր մի կայծ՝ մթնոլորտը բռնկեցնելու համար.. Որքա՜ն հեռատեսութիւն և որքա՜ն սրտացաւ մտահոգութիւն՝ հայ ժողովրդի կեանքի ու գոյքի վերաբերմամբ...

Եւ դարձեալ, ընթերցող, Դրօշակեաններն են պատճառ, որ ռուս սօցիալ-դեմօկրատները անզէն էին մնացել, և որ այն սարսափելի օրերում նրանք „ո չ ն չ ո վ ց ո յ ց չ ը տ ո ւ ի ն ի ր ե ն ց գ ո յ ո ւ թ ի ւ ն ը . . .

„Որ ռուս բանւորները մնացին կրաւորական դիրքում, այդտեղ մեծ չափով մեղաւոր են իրանք Դրօշակեանները։ Նրանք շատ միջոցներ, շատ զէնք ունէին. բայց նրանք միեւնոյն ժամանակ կղզիանում էին ռուսներից, հրաժարուելով օգնել կոմիտէին (ս. ց.-դեմ.)՝ կազմակերպելու զինուած խմբեր ռուս բանւորներից, որոնք պատրաստ էին օգնութեան գնալու։ Տեղական կոմիտէն միջոցներ չունենալով (ամբողջ բուրժուազիան այստեղ հայերից է բաղկացած), ոչինչ չը կարողացաւ անել իր գրոշներով“. . .

Ի զուր, ի զուր կը փնտրէք մի անկեղծ ու ճշմարիտ խօսք՝ ստերի ու ինսինուացիաների այս այլանդակ հիւսուածքի մէջ։ Բաւական չէ մեր դառն, ցաւալի հիասթափութիւնը հանդէպ այն տխուր իրողութեան՝ որ հսկայական աղէտի օրերում ռուսական կուսակցութիւնները, իրենց իսկ կոպիտ խոստովանութեամբ, „ոչնչով“ ցոյց չը տւին իրենց գոյութիւնը, (ուզում էին, թերեւս, անպատճառ 100 հոգի լինել և այն էլ անպատճառ հ ր ա ց ա ն ո վ զինուած), որ ամեն օր, ամեն մի առթիւ ազգերի եղբայրութեան անունով խօսող, բարձրագոչ նշանաբաններով օդը խլացնող մտաւորականներն ու մասսաները ցոյց տւին ապառաժեայ անտարբերութիւն անօրինակ տագնապի օրերում,— երբ ամեն մի պարզ քաղաքացու սուրբ պարտականութիւնն էր օգնութեան գալ հայ ժողովրդին, քանի որ սա մղում էր ինքնապաշտպանութեան հարկադրուած կռիւը վայրենութեան դէմ—բաւական չէ այդ բոլորը, այժմ էլ նրանք դեռ անսովոր քաջութիւն ունին հրապարակով այպանելու, սեւացնելու ն ր ա ն ց, որոնց սիրտը արիւնոտւում էր ի տես հարազատների մասսայական խողխողման, որոնք առաջ էին նետւում՝ երկաթի ուժեղ հակահարուածներով կանգնեցնելու ոճրագործ ձեռքը. . . Այո, այժմ էլ դեռ, իրենց զարմանալի ընթացքը քաշքշուկներով վարագուրելով, նրանք չեն վարանում—օ՛, հակառակորդութեան զազրելի ախտ—չեն վարանում նոյնիսկ à l'unisson „Մօսկ. վսկիա Վեդօմոստի“-ի և ռուս կառավարութեան ամբաստանութիւններին՝ հրապարակել ի լուր աշխարհի, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը անգիտակից պրովօկատօրի դեր է ստանձնել թուրք-հայկական արիւնալի կօշմարի մէջ. . . Դառն է, քամնելի է։

ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ ՇՈՒՇՈՒՄ

Փոթորկոտ վիճակը եւ անընդհատ, տենդային գործունէութեան պահանջը թոյլ չը տւին ժամանակին արձանագրել գէթ գլխաւոր դրւագները այն մեծ դրամայի, որ վերջերս խաղացւեց պատմական Ղարաբաղում։ Լաւ է սակայն ուշ, քան երբէք։

Ընդհարումը անխուսափելի էր դարձել Ղարաբաղի մայրաքաղաքում եւ «Դաշնակցութեան» տեղական մար-

մինն մնում էր ձեռնարկել նախապատրաստական գործողութիւնների՝ Թուրքաց յարձակման դիմագրաւելու համար։

Քաղաքը բաժանւեց թաղերի։ Ամեն մի թաղ ունէր իր թաղապետը եւ սրա օգնականը։ Իւրաքանչիւր թաղում ռազմական տեսակէտից կարեւոր կէտերը վերածւեցին դիրքերի, որոնցից ամէն մէկում հսկում էին 4-ից մինչեւ 10 կամաւոր։ Ահաւասիկ այդ կարեւոր դիրքերը. Ծաքած քէրծի գլուխը, Վերի գարբանները, Իրզաբէկի պարտէզը, Քարի սակի ճանապարհի բերանը, Գեօվհար աղայի տան դիմացի դիրքը, մի այլ դիրք նոյն տնից վեր սարի վրայ, Բաղունց հորերը, Վերդանց պարտէզը, Ալէքսան բէկի տունը, ապա մի դիրք Թատրոնից վար, երեք դիրք հին հանգստարանի շրջակայքում, տպարանի դիրքը, Ագուլեաց եկեղեցին, երեք դիրք Աղաբէկենց ձորում, երեքը Ղուժուղում, մէկը Աղա Իրզայի տան մօտ, մէկը Քամու Ջաղացում եւ մէկը՝ Բարութխանում։ Բացի դրանից, կազմակերպւած էր եւ Թ ռ ու ց ի կ խ ու մ բ՝ խմբապետով եւ սրա օգնականով։

Արդէն գրւած է մի շարք փոքրիկ ընդհարումների մասին, որոնք տեղի էին ունեցել հայերի ու Թուրքերի միջեւ Խաչէնի գաւառում։ Աջողութիւնը ամէն դէպքում հայերի կողմն էր։ Աղդամի Թուրքերը, հայերից վրէժ լուծելու համար, 300 հոգուց բաղկացած մի արշաւախմբով ուզում էին յարձակւել Առաջաձոր հայ գիւղի վրայ, բայց այդ գիւղի ձորի մութքում դարան մտած հայ քաջերը յետ են քշում նրանց։ Աղդամցիները, կատաղած, տուն են դառնում եւ որոշում են այլ կերպ վրէժխնդիր լինել։ Այս անգամ նրանք դիմում են զուտ Թրքական մի միջոցի. կտրում են Շուշի—Եւլախ ճանապարհը, որ անցնում է Աղդամով եւ գերի են վերցնում հարիւրից աւելի հայ ճամբորդներ, Թալանում են նրանց, անպատւում եւ մի քանիսին դաշոյնով վէրքեր հասցնում։ Այդ բոլորը կատարւում է գաւառապետի, նահանգապետի օգնականի եւ ամբողջ ոստիկանական կազմի ներկայութեամբ։

Այժմ գանք այն միջադէպերին, որոնք անմիջական առիթները եղան Շուշի քաղաքի մեծ ընդհարման։

Օգոստոսի 7-ին, քաղաքի Թրքական սահմանից մօտ Թուրքերի ձեռքով սպանւեց մի Թուրք լապտերավառ։ Թուրք բէկերը վերագրում են այդ սպանութիւնը հայերին եւ սկսում բացարձակ պրօպագանդ հայերի դէմ։

Ղեկավարող դերը կատարում էր քաղաքիս Թուրք ոստիկանապետ Խոսրով բէկ Ֆօլատովը. Այդ Թուրքը պարզապէս յայտարարել էր, որ շուտով պիտի Թողնի ոստիկանապետի պաշտօնը եւ պիտի կազմի մի աւազակային խումբ, յատկապէս հայերին պատժելու նպատակով։

Օգոստոս 16-ին Թուրքերը յարձակւում են Քարահատ կիրճում մի զինւած հայի վրայ, վիրաւորում նրան եւ խլում հրացանը։ Մի քանի ժամ դրանից յետոյ Թուրքերը սպանեցին նախկին դատաւոր ռուս Լունիակինին։ Նոյն օրը Շուշուց Գօրիս տանող խճուղու վրայ՝ Եարմայում գարսլւեցի Թուրքերը վիրաւորեցին ղարադշլաղեցի մի հայ գիւղացու։ Հաւարը հասնում է քաղաք, մեր ընկերները—Մարգար Ժամհարեան եւ մի քանի ուրիշ դաշնակցական կամաւորներ—գնացին օգնութեան, Եարմայի մօտ սկսւեց հրացանաձգութիւն. Թուրքերը փախան։ Այդ օրը, ժամը մօտաւորապէս 4-ին քաղաքի մէջ արձակւեց առաջին հրազէնը. հայ քաղաքացիներից շատերը պնդում են, որ այդ ազդանշան տւողը հէնց ինքը Թուրք ոստիկանապետն էր։

Կռիւը սկսւեց. . .

Քաղաքի կենտրոնում ու ծայրերում սկսւեց կատաղի հրացանաձգութիւն եւ Շուշին մի քանի րոպէի մէջ վերածւեց պատերազմի դաշտի։ Ամբողջ քաղաքը Թափւեց փողոց։ Բոլոր անկիւններում վխտում էին զինւած ու անզէն երիտասարդներ։ Ուրախ ու զւարթ շրջում էին փողոցից փողոց եւ խրախուսում իրար, ամենքն էլ վստահ՝ որ յաղթութիւնը մերը պիտի լինէր։ Կանայք եւս դուրս էին եկել տներից, մի քանիսը նոյնիսկ զինւած։ Հրացանաձգութիւնը վայրկեանէ վայրկեան սաստկանում էր. երկու կողմերը, դիրք բռնած՝ անխնայ կրակ էին Թափում։

Հայոց մասի կենտրոնական շուկայում—Թօփխանայում—գնտակահար ու սրախողխող եղան բազմաթիւ Թուրքեր։ Նոյն վիճակին ենթարկւեցին մի քանի հայեր Թուրքաց բազարում։ Կռւի սկզբում Թուրքերի գնդակին զոհ գնաց Դաշնակցութեան արի եւ հաւատարիմ զինւորներից մէկը՝ Ս ա մ ի ր ը, որը մեն-մենակ կռւում էր մեր առաջաւոր եւ վտանգաւոր դիրքերից մէկում։

Մի քանի րոպէ չէր անցել կռւի սկզբից, երբ սկսւեց մի արշաւանք «Դաշնակցութեան» կենտրոնական գրասենեակի վրայ։ Արշաւանք՝ հայերի կողմից. . . Քաղաքացիներ, որոնք երբէք չեն օժանդակել քաղաքը պաշտպանող միակ յեղափ. կազմակերպութեան, եկել էին նոյն կազմակերպութիւնից զէնք ու փամփուշտ պահանջելու, իրենց տները պաշտպանելու համար։ Նոյնպէս եւ զանազան խմբակների պատկանող մարդիկ, որոնց գործը մինչ այն՝ Դաշնակցութիւնը արատաւորելն էր, շտապում էին մեզնից ռազմամթերք աղերսել. . . Ստեղծւել էր մի ուշագրաւ դրութիւն։ Ժողովուրդ եւ «Դաշնակցութիւն»ը մի էին ձուլւել։ Սահմանագիծը հայ քաղաքական կուսակցութեան եւ հայ մասսայի միջեւ՝ չքացել էր։

Վրէժխնդրութեան զգացումը կատաղի էր հայերի մէջ, ձեռքերն ընկած Թուրքերին անխնայ կոտորում էին։ Տխուր, այլանդակ իրողութիւն, բայց չափազանց բնական, չափազանց հասկանալի... Ահա տենդային կռւի միջոցին սուսիկ-փուսիկ ներս է մտնում նոյն Դաշնակցութեան գրասենեակը 19 տարեկան Իշխան Հէյրաթեանը։ Նա իր ձեռքով 17 Թուրք էր սպանել հայոց Թաղում, եւ չը գիտէր, ուր տանել դիակները։ Կարգադրեցին մի կերպ Թաղել։ Պատանին նորից լցրեց փամփուշտամանը, սրբեց ճակատից ծորացող քրտինքը եւ հեռացաւ... Այդ միշտ ժպտուն, հեզ ու լռիկ Իշխանը..

Մութը վրայ հասաւ. գիշերւայ անունը «կռիւ» է, ամբողջ քաղաքի մէջ հնչւում էր՝ կռի՛ւ, կռի՛ւ.... Կօզակներն անգամ գիտէին գիշերւայ անունը եւ հայերի մթութեան մէջ տւած հարցումներին՝ «ո՞վ ես»—իսկոյն պատասխանում էին. «կռի՛վ»... Դուք արդէն գիտէք, որ վերջինների համակրութիւնը սկզբից մեր կողմն էր. նրանք մեր տղաների հետ քովէքով կռւեցին Թուրքերի դէմ։ Առ այժմ այսքան։ Այլ մանրամասնութիւններ՝ յաջորդ նամակով։

ԱՂԵՏԻՑ ՅԵՏՈՅ

I

Բագու, 5 նոյեմբեր.

Ոչ մի յանցաւոր պաշտօնեայ չ'արձակւեց, ոչ մի ոճրագործ չը բռնւեց, ոչ մի քննութիւն չը սկսւեց, բոլորն էլ շարունակում են, ինչ որ սկսել էին, անվախ, համարձակ, անպատկառ՝ միշտ հային զինաթափ անելով, մեղադրելով և Թուրքին երես տալով։ Գեներալ Սվէտլօվի և քաղաքային զօրքի հրամանատարի հեռացումը մի առանձին կարեւորութիւն չունի, քանի որ նրանց զօրաբաժինները գնում են իրենց տեղերը և նորերը պիտի գան։ Վերջապէս, զօրքը և զօրավարը փոխելով, ս ի ս տ է մ ը չէ փոխւում. . . Քաղաքի նոր զին. հրամանատարը միւսների երգն է երգում. „Հայերն են մեղաւոր, հայերը չեն ուզում հաշտութիւն“. . .

Քառներրորդ անգամը հաշտութեան Թափոր եղաւ,— միշտ միենոյն կատակերգութիւնը. . . Կարծէք մէջտեղը երկու Թշնամի բանակներ կան, որոնցից կախւած է հաշտութիւն կնքելը կամ չը կնքելը, կարծէք կառավարութիւն չը կայ՝ հպատակների կեանքն ու գոյքը ապահովելու պարտաւոր։

Այժմ դրութիւնը աւելի վատ պիտի համարել, քան փետրւարեան օրերում։ Այն ժամանակ գոնէ հասարակաց զայրոյթը ամեն կողմից ամբաստանում էր ոստիկանութիւնն ու վարչութիւնը,—այժմ այդ էլ չը կայ։

Հայ և Թուրք ներկայացուցիչների միջև բանակցու-

թիւնները՝ հաշտութեան համար երկու կողմից երաշխաւորող պարտաւորութիւններ ստանձնելու նպատակով, անաջող վերջացան։ Որովհետև այդ առաջարկը եղել էր հայերի կողմից, և հայերը առաջարկել էին էապէս մի բան՝ որ գործուելիք ոճիրները—քաղաքում լինեն թէ արդիւնաբերական վայրերում՝ Բալախանի, Սև քաղաք, Բիբի-Էյբաթ՝ ոճրագործները յայտնի լինին, թէ ո՛չ, ձերբակալուին, թէ ո՛չ, սպանուած կամ վիրաւորուածը աղքատ լինի, թէ ո՛չ,—ընդունելիք միջնորդ դատարանի վճռով սահմանուելիք գումարը իբրև տուգանք տրուի ոճիր գործողի հայրենակիցների կողմից՝ սպանուածի ժառանգներին, կամ վիրաւորեալին և կամ հրդեհի ու կողոպուտի ենթարկուածին։

Չը նայելով որ Թուրքերը այս պայմանին համաձայնուել էին բերանացի, փոխարքայի այստեղ գտնուած ժամանակ, յետոյ և ընդ. նահանգապետի ներկայութեամբ, բայց երկու անգամին էլ գրաւոր պատասխաններով անտես արեցին իրենց խոստումները և առաջարկեցին տուգանքը յատկացնել ոճրագործը չը յայտնուած պարագայում, սպանուածի կամ վիրաւորուածի կար ու եղած դէպքում և միմիայն քաղաքի սահմաններում։

Հայերի ներկայացուցիչները այս հարցի բանակցութիւնների պատճէնները կցելով իրար՝ մի մեմորանդում կազմեցին՝ և գլուխ ունենալով Անանիա եպիսկոպոսին, երկու պատգամաւորներ ուղևորեցան Թիֆլիս՝ փոխարքային ներկայացնելու համար։ Նոյնը գրաւոր կերպով ներկայացրին և ընդ. նահանգապետին։

Այնուամենայնիւ Թուրքերը այդ երաշխաւորութիւնը դիպլոմատիկական խաբէական ձգձգումներով, դրժումներով ապարդիւն հանելով հանդերձ՝ յաջողեցան ընդ. նահանգապետին համոզել՝ մի նոր թափոր սարքել տալու, թափորին այս անգամ կցել տալով զին. նուագածուների խումբը, որ քաղաքում ման գալով հաշտութիւն յայտարարէ. դրա շնորհիւ Թուրքերը այժմ ազատ երթևեկում են հայկական մասը. և այդ բանը հայերին շատ թանկ կարող է նստել, որովհետև հէնց թրքական աղբիւրներից ամէն օր յամառ լուրեր են լսւում՝ Թուրքերի մտադրած նոր յարձակումների մասին։

Մինչ այս մինչ այն՝ հալածանքները շարունակւում են հայերի դէմ։ Միրզաբէկեանի ծխախոտի գործարանի դէպքը չափազանց վրդովեցուցիչ է։ Այդ գործարանը ունի 7—800 գործաւոր, որոնց 5—600-ից աւելին հայեր են, մնացածը՝ ռուսներ և 40—50 էլ Թուրքեր։

Այդ Թուրքերը՝ մինչև օգոստոսի աղէտները, ամէն տեսակ նեղութիւններ տուել են հայերին, սպանութիւն անգամ կատարել են։ Սեպտեմբերի սկզբներին, երբ գործարանատէրը ուզում է աշխատանքը վերսկսել, հայ բանուորները պայման են դնում՝ Թուրքերին չը վերցնել։ Գործարանատէրը ուրախութեամբ ընդունում է պայմանը, բայց մի երկու օր յետոյ ոստիկանութիւնը միջամտում է՝ Թուրքերին ընդունել տալու համար։ Տեսնելով որ ոստիկանապետի միջամտութիւնը չէ ազդում, ընդ. նահանգապետն է անձամբ միջամտում. նա սպառնում է հայ բանուորներին աքսորել, գործարանը փակել, եթէ Թուրքերը չեն ընդունւի... Լրբութիւնը հասնում է գագաթնակէտին։

Ո՛չ մի Թուրք գործարանատէր հայ բանուոր չի ընդունում, նրանց ընդունել տալու խօսք անգամ չի կարող լինել, բայց երբ հայ բանուորի կեանքի ապահովութիւնը պահանջում է Թուրք խռովարարներին չ՚ընդունել, հայ գործարանատէրը զրկւում է իրաւունքից՝ ուզածին արձակել կամ պահել։

Ամէն հնար գործ է դրւում՝ հայ տարրը այս շրջանից դուրս շպրտելու համար։

*

Հայ պատգամաւորների ասելով, փոխարքան սիրալիր ընդունելութիւն է արել նրանց և ուշիուշով նրանց խնդիրքը լսելուց յետոյ, յայտարարել է, թէ կատարեալ հաւատք ունի (՞) հայ հասարակութեան վրայ, թէ բացի Թուրքերից մեղաւոր է և կառավարութիւնը, Գալիցինեան նախկին ռէժիմը, և թէ ժամանակի ընթացքում արմատական փոփոխութիւն պիտի մտցնէ վարչական ու ոստիկանական կազմի մէջ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ՏԱՐՕՆԷՆ

Հոկտեմբեր 1.

Ձեզ արդէն յայտնի են բժիշկ Զաւրեանի դժբախտ արկածները։ Բուսական նեղութիւններէ յետոյ նա յաջողած էր Մուշ գնալու հրամանը ձեռք բերել, բայց տարաբախտաբար, մի ամիս Կարին մնալէ յետոյ, երբ կանցնի Բաղէշ, որ Մուշ գայ, Մշոյ անխիղճ միւթեսարիֆը հազար ու մի միջոցներ ձեռք կ՚առնէ և տակաւին նոր գործի ձեռնարկած՝ բժիշկը կրկին ետ կը դառնայ դէպի Ռուսաստան։ Մի քանի օր միայն մնաց Մուշ։ Թէ ի՞նչ տպաւորութիւն կը թողու անոնց անակնկալ հեռանալը մեր խեղճ հայրենակիցներու վրայ, ձեզ լաւ յայտնի է։ Մի յայտնի գումար կրցաւ հասցնել Սասուն՝ սոված ժողովրդեան բաշխելու համար։

Այս միւթեսարիֆը ըստ երևոյթին ուխտած է ծայրայեղ ճնշման տակ հայերին ուժասպառ անել ու կորսնցնել։ Ապօրինի հարկերի հաւաքումը կը բազմապատկուի միշտ։ „Գըրգասարտարի“ ամենօրեայ տուած տանջանքները չափ ու սահմանից անցել են։ Արդէն ո՛չ մի բողոքի ուշադրութիւն դարձնող չը կայ։ Կառավարութիւնը Սասնոյ կարօտելոց տուած 5000 լիրան մենակ քաղաքի ունևոր դասակարգից հաւաքեց, (բռնի խանութների և տների ապրանքները հրապարակ հանելով և թիւրքաց վրայ քառորդ գնով ծախելով)։ Քանի մենք երեք եղբայր էինք, կառավարութիւնը 400 ղրշ. տուրք կը վերցնէր մենէ, իսկ այժմ, որ վաղուց երկու եղբայրներս հեռացել են և այստեղ մեռած կը կարծուին անոնք, կրկին ինձմէ 1100 ղրշ. ստակ տուրք կառնէ տարեկան։ Երևակայեցէ՛ք, թէ ինչ կը լինի թալանուած ու տանջուած գիւղացու վիճակը... Կարգ մը հեռագիրներ քաշուած են Բ. Դուռը, բայց մինչ ցարդ ապարդիւն։

Խարսի աւերումէն մի քանի օր յետոյ Անգղիոյ և Գաղիոյ քօնսիւլներ աղէտի վայր գնացին, կառավարութիւնն ալ քննութիւն բացաւ և հրաման ըրաւ, որ բնակիչները իրենց տեղերը դառնան։ Վերոյիշեալ Սասնոյ Նպաստի մէկ մասն ալ անոնց տները շինելու յատկացուց։ Այժմ գիւղը ամբողջովին հաստատուած է, սակայն հիմակ ալ սովամահ կըլլան և շատերն ալ այս ու այն կողմը կը տարածուին՝ իրենց չոր գլուխը պահելու համար։

Ամսոյս 6-ին Արգաւանք գիւղի մէջ մատնութեան շնորհիւ, Աւզագբրայ միւտիր և Թըլայ շէյխ Էմինը ճարպիկութեամբ մի խումբ տղաներու կեցած տունը կը պաշարեն՝ վարդխաղցի, ծղաքցի և այլ քրդերով։ Տղայք բոպիկ և գլխաբաց դուրս կը թռչին և անհաւասար կռիւ մը կը սկսի երկուստեք։ Մեր անվեհեր քաջերը աջ ու ձախ կը թափեն քիւրդերին. 12-էն աւելի վիրաւոր և սպանուած կան քիւրդերէն, ընդ որս վիրաւորուեր է նաև շէյխ Էմինը, առանց սակայն վերջին շունչը փչելու։

Տղայք ճեղքելով այդ բաշիբոզուքների բանակը, կ'աշխատին իրենց առաջնորդ Գուլօրիկցի Զաքարի և Յարթինի հետ դէպի լեռը քաշուիլ, երբ յանկարծ կը պատահին մի վաշտ նոր հասած կանոնաւոր զօրաց։ Ծանր բոպէն հասած էր։ Կատաղի կռիւը կը շարունակուի մինչև արևի մար մտնելը։ Ինկած են բաւական զինուորներ և մի սպայ։ Բայց մեր տղայք բոլորը միասին կռուելով մինչև վերջի փամփուշտը, ինկան այնտեղ, ընդունելով նահատակութեան անթառամ պսակը։

Չենք գիտեր, ո՞ր ցաւին դարման անենք, այս նեղ ժամանակին։ Սև գինին քիլան 50 ղրշ. է, ցորենը 100 ղրշ. դէհ եկուր ու ապրիր։ Մերկ ու անտէր, անտուն ժողովո՛ւրդ... Կալ ու կուտը սկսեր է վերջանալ, բայց խնդիր է, թէ խեղճ գիւղացին ի՞նչ կը տանի իր կալ ու կուտէն իր տուն, իր սովալլուկ ու թշուառ որբերուն կերակրելու։ Հիմակուընէ արդէն կը սկսին սալաֆով և զանազան տոկոսաւոր պարտքերով ապրել մինչև յառաջիկայ գարունը։ Իւ ադոր համար է, որ չ'անցնիր մի քանի կարճ տարի,—և ահա կալուածատէր հայ շինականը դարձած կը լինի անհող, անտուն պրոլէտարիաթ մը, ճորտ մը, գերի մը միայն չոր հացի մը համար աշխատող և տառապող ուրիշի հողի վրայ։ Շուտով ձմեռը յաջորդելու է այս սովատանջ վիճակին... Բժիշկը Թիֆլիս հասնելէ յետոյ կրկին 150 լիրա օգնութիւն հասցրեց մեր լայնածաւալ գաւառի արկածելոց, բայց ի հարկէ, չնչին բան մընէ։

Այո, ձմեռը կը մօտենայ և այս ձմեռը պիտի ըլլայ ահռելի տեղական ազգաբնակութեան համար։ Արհեստական սովը և զանազան տարափոխիկ հիւանդութիւններ այժմէն արդէն սկսել են տարածուել հայ գիւղացիների մէջ։ Անցեալ տարւայ թշուառութեանց պատճառաւ տեղի ունեցած հիւանդութիւն մօտ 200 մարդ (երիտասարդ ուժերէն) կերաւ քաղաքէն, թո՛ղ գիւղացիներէն և սասունցիներէն։ Այս տարի մի բան աւելի է, քանի որ թշուառները կրկնապատկուած են։ Պէտք է դիմել, աղաղակել, ստիպել մեր յարգելի ազգայիններին և հեռաւոր սրտակից եղբայրակիցներին, որ փութան դրամական նպաստ հասցնելու, ապա թէ ո՛չ Տարուբերանի հայ ժողովուրդը կորած է. այլ ևս դիմանալ անհնար է։—Ո՞ր Յիսուս, ո՞ր ազգ, ո՞ր ժողովուրդ տարաւ այս վերջի 20 տարւայ Տարօնոյ հալածանքը և անսասան մնաց...

ՆԱՄԱԿ ԲԱՆՏԻՑ

(Պատճէն)

Յարգելի հայրենակից,

Նամակ մըն ալ, թերևս վերջինը։

Մարտի 21-ին, կապերտավաճառ մը կապերտներ բերած էր բանտ, բանտարկեալներուն ծախելու համար։ Դուրսի մարդոց արգիլուած չէ բանտ գալ ու բանտարկեալներուն ծախել ամէն առարկայ. անոնք կը խուզարկուին միայն բանտի դրան առջև պահնորդութիւն ընող ոստիկան զինուորներէն, և եթէ կը կրեն վրանին զմէլի, դանակ և կամ բանտի համար արգիլեալ ամէն առարկայ, կը յանձնեն զայն պահնորդ ոստիկան զինուորներուն։

Ինչպէս շատ մը բանտարկեալներ, մենք հայերս ալ գնելու համար աժանագին կապերտներ, մօտեցանք պարտէզի վանդակապատին, որուն միւս կողմը ցուցադրած էր կապերտավաճառը իր կապերտները։ Անիկայ տեղացիի մը երևոյթը չունէր. մեր ընկերներէն մէկը հետաքրքրութիւն ունեցաւ հարցնելու յիշեալին թրքերէն լեզուով որ տեղացի ըլլալը. և ահա նախատեցաւ հայհոյանքով մը ոստիկան զինուորներէն, որոնք բիրտօրէն հրամայեցին նաև կապերտավաճառին դուրս ելնել բանտէն։ Շատ քաղաքավարօրէն գիտել տուինք ոստիկաններուն, թէ անտեղի էր իրենց այդ արարքը, քանի որ արգիլուած չէր բանտարկեալին գնումներ ընել վաճառողէն, քանի որ վաճառողներուն արգելուած չէր բանտին բակը մտնել, քանի որ իրենք ոստիկանները թոյլատրած էին այն անձին ներս մտնել, „մանաւանդ որ նա թրքախօս մ'էր, հայերէն բառ մ'իսկ չէր գիտեր“։ Բայց զինուորները, ինչպէս նաև բանտին պաշտօնէութիւնը, որոնք չենք գիտեր, ինչո՞ւ ատելութեամբ լեցուած են սկիզբէն ի վեր հայերուս դէմ, մեր այդ համեստ դիտողութեան պատասխանեցին անլուր լուտանքներով, հայհոյանքներով, ազգային ու կրօնական զգացումներ վիրաւորող ամենաաղտոտ նախատինքներով։ Ասով ալ չբաւականանալով, կատարեալ յագուրդ տալու համար իրենց մոլեռանդութեան ու վայրագութեան, հաստ բիրերով յարձակեցան մեր վրայ ու աջէն, ձախէն, վերէն ու վարէն բիրերու հարուածներ սկսան տեղալ մեր գլխուն. վերջ գտան հարուածները, երբ մեզմէ մէկուն, չկրնալով տոկալ հարուածներուն, գետին ընկնելը տեսան, որուն ականջէն սկսաւ ծորիլ թարախ և արիւն. հիմայ այդ տղուն մէկ ականջը խուլցած է. և ի լրումն իրենց վայրագութեան ու մոլեգնութեան, մեր մէկ ուրիշ ընկերոջ ոտքին ահագին շղթայ մը զարնելով նետեցին զնդանը։ Երեկոյեան ուշ ատեն դուրս բերին զանիկայ զնդանէն ու հանեցին շղթան ոտքէն։ Եւ որպէս զի այս դէպք չ'արձագանքէր դուրս, խստութիւնները կրկնապատկեցին ու չթողուցին դուրսի մարդոց ու բանտարկեալներու ազգականներուն բանտ այցելել։

Ահա այս էր պատճառը, որ այս ցաւալի դէպքը ժամանակին չկարողացանք տեղեկացնել ձեզ. հազիւ միջոցը գտած, կը գրենք ձեզ, սակայն ի՞նչ օգուտ։ Այս դէպքը առաջինն ու միակը չէ իր տեսակին մէջ. նմանօրինակ դէպքեր յաճախ պատահած են հոս մեր բանտարկուած օրէն աստի։

Առաջները քանիցս դիմեցինք տեղական կառավարութեան, կուսակալութեան, արդարութեան քննիչին, արդարութեան նախարարութեան, և մատնանշելով մեր կրած նեղութիւնները, չարչարանքները, պաշտօնէից խիստ ու բիրտ վարմունքը մեզի դէմ, անոնց զեղծումներն ու աչառումները, աղաչեցինք ու խնդրեցինք ճար մը, դարման մը մեր անտանելի կացութեան։ Դժբախտաբար ոչ մի արդիւնք տեսանք և մեր բողոքներուն հակազդեցութիւնը կրեցինք միշտ բանտի պաշտօնէութենէն, որ կարծես աւելի մղում տաւ իր կոշտ ու վայրագ ընթացքին, առիթներ ստեղծելով ա՛լ աւելի նեղելու, ճնշելու, չարչարելու զմեզ։ Բանտարկեալներն ալ, այն խումբ վայրագ ոճրագործները, որոնց մէջ կը գտնուինք, և որոնք զինուած են, առհասարակ Տաճկաստանի միւս բանտերուն մէջ գտնուող ոճրագործներուն պէս, դանակներով, դաշոյններով ու եաթաղաններով, շատ բնական էր որ, քաջալերուած ու խրախուսուած բանտի պաշտօնէութեան մոլեռանդութենէն և հայերուս մասին տածած ու սնուցած ատելութենէն, նախատէին, հայհոյէին, չարչարէին զմեզ և յաճախ սպառնային մեր կեանքերուն։

Մեր մէջ կը գտնուին քաղաքական յանցանքով բերդարգելութեան դատապարտեալ հայեր ալ, որոնք, օրէնքին բացորոշ ու բացարձակ տրամադրութեանց հակառակ, տարիներէ ի վեր կը պահուին բանտին մէջ, հասարակ ոճրագործներուն առընթեր։ Երկու տարի առաջ, արդարութեան քննիչը բանտ այցելած ժամանակ, պատուիրած էր բանտի պաշտօնէութեան և ոստիկանութեան, անջատել այդ բերդարգելները հասարակ թիապարտներէն և դնել զանոնք բանտի բակին մէջ գտնուած սենեակը, ուր դրուած տեսած էր կաշառով և մանաւորներու միջամտութեամբ տասը, տասնևհինգ տարուան թիապարտութեան դատապարտուած թուրք ոճրագործներ։ Պատուիրած էր նաև չնեղել ու չծեծել առհասարակ հայ քաղաքական դատապարտեալները, ծանրանալով յատկապէս ծեծին վրայ, որուն՝ բանտերուն մէջ խիստ արգելուած ըլլալը շեշտած էր։ Ճիշդ երկու ահագին տարիներ անցան այն օրէն ի վեր և մեր անտանելի վիճակը տակաւ յուսահատականի վերածուեցաւ։ Ամիսուկէս առաջ, մարտ 2-ին, կրկին բանտ այցելեց նոյն արդարութեան քննիչը. բողոքեցինք յիշեալին, թէ մենք

այլեւ չէինք կրնար հանդուրժել բանտի պաշտօնէութեան կողմէ եղած նախատինքներուն, հայհոյանքներուն, չարչարանքին ու ծեծին, որոնց նշաւակ կ'ըլլայինք գրեթէ ամէն օր, և թէ մահը կը նախընտրէինք, քան այդ կեանքը: Զայրացաւ քննիչը, կամ աւելի ճիշդը, զայրանալ ձեւացուց, երբ իր պատւէրը չգործադրուած և հայ բերդարգելները թիապարտներուն մէջ տեսաւ. կրկնեց երկու տարի առաջուան պատւէրն ու հեռացաւ:

Թերեւս հետաքրքիր ըլլայիք իմանալու, թէ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ քննիչին պատւէրը. այդ մասին թող խօսի մարտ 21-ի դէպքը:

Այն սենեակը, ուր բերդարգելները դնել հրամայած էր քննիչը այսօր թիապարտներ դրուած են վերստին: Եւ երբ, դեռ երկու օր առաջ, հայ բերդարգելները անգամ մը եւս դիմելով ընդհանուր դատախազի օգնականին և ոստիկանութեան հազարապետին, բերդաքաղաքին ներսը, օրէնքին թոյլատրած չափովը, ոստիկանութեան հսկողութեան տակ ազատ թողւելու և բռնապահիկնին կարենալ հայթայթելու մասին թոյլտւութիւն կը խնդրէին, այդ վերջինները, հեգնելով մը, քննիչին դիմեցէք, կ'ըսէին:

Պոլսոյ եղեռնադատ ատեանը, իր նախագահին բերնով, հարիւրաւոր ունկնդիրներու ներկայութեան, իւրաքանչիւր բերդարգելին դատապարտման վճիռը արձակելէ վերջ՝ գծած, սահմանած էր դատապարտեալին ենթարկւելիք վիճակը հետեւեալ խօսքով. „Պիտի ղրկւիս պարսպապատ ու ամրապատ քաղաք մը և հոն՝ քաղքին ներսը ազատ պիտի ըլլաս, որպէս պարզ քաղաքացի. միայն թէ չպիտի կրնաս դուրս գալ այն քաղքէն. ջանա իսլահը նէֆս ընել, որպէս զի արժանանաս օր մը կայսերական ներման“:

Դժբախտաբար հայ բերդարգելներն ղրկւեցան այնպիսի քաղաքներ, ինչպէս Պոտրում (Իզմիրի կուսակալութեան կը պատկանի), Սիւրիական Տրիպօլիս, որոնք պարսպապատ ու ամրապատ չէին. և այս յատուկ այն նպատակով որ երբ բերդարգելները պահանջէին, ըստ օրէնքի տրամադրութեան, բանտէն դուրս, քաղքին ներսը ազատ թողւիլ, պիտի առարկւէր իրենց թէ քաղաքը բերդաքաղաք չէր: Ղրկւեցան հայ բերդարգելներ պարսպապատ ու ամրապատ քաղաքներն ալ, ինչպէս Սինապ, Աքիա, բայց փոխանակ այդ քաղաքներուն ներսը ազատ թողւելու, պահւեցան ու դեռ կը պահւին բանտերուն մէջ: Թիւրք բերդարգելներ ղրկւած չեն ոչ պարըսպապատ ու ոչ-ամրապատ քաղաք մը, ինչպէս նաեւ անոնցմէ հատ մը չկայ պարսպապատ ու ամրապատ քաղաքներու բանտերուն մէջ:

Աւելորդ չենք համարեր քաղաքական յանցանքով դատապարտեալ թիւրք և հայ բերդարգելներուն միջև եղած տարբերութեանց համառօտ բաղդատութիւնն ընել հոս:

Երեք տարի առաջ Պոլսոյ կեդրոնական բանտէն Սինապ ղրկւեցան միեւնո՛ն օր, միեւնոյն շոգենաւով թիւրք և հայ բերդարգելներ. թիւրքերն առաջնորդւեցան ուղղակի կառավարական պալատ և անկէ ազատ թողւեցան քաղաքին ներսը, իսկ հայերը՝ ուղղակի բանտ, ուր կը մնան մինչև հիմայ: Երկու տարի առաջ Պոտրումի համար Իզմիր ղրկւեցան միաժամանակ, միեւնոյն շոգենաւով նորէն թիւրք և հայ բերդարգելներ: Իզմիրի կուսակալը, Պոտրումի բերդաքաղաք չ'ըլլալն առարկելով, չղրկեց թիւրքերը հոն. առ այդ բանակցութիւններ եղան Իզմիրի ու Պոլսոյ միջև, հուսկ ուրեմն թիւրքերը ղրկւեցան Միտիլէ և ազատ թողւեցան բերդաքաղաքին ներսը. մինչդեռ հայոց համար առարկութիւն մ'իսկ չեղաւ և հայերը ղրկւեցան Պոտրումի բանտը, ուր կը մնան մինչև հիմայ: Սիւրիական Տրիպօլսոյ և Աքիայի համար ըսինք արդէն, ուր հայերը բանտերուն մէջ, թիապարտներէն անջատ, սենեակ մ'ալ չդրւեցան:

Անշուշտ կայ թաքուն նպատակ մը հայ քաղաքական բանտարկեալները՝ բանտերու ներսը չարչարելուն, տառապեցնելուն, և հայ բերդարգելները՝ բերդաքաղաքներուն ներսը ազատ չթողելուն մէջ:

Գիտելի է նաեւ սա պարագան, որ թիւրք բերդարգելներուն ամէնուրեք ռոճիկ մը կը տրւի կառավարութեան կողմէ, բերդարգելին՝ ընտանիքի անդամներուն թիւին և ունեցած անհատական դիրքին համեմատ, մինչդեռ հայ բերդարգելները չոր ու ցամաք հացէն զատ բան մը չունին:

Ահա խտիրը մահմէտականին ու քրիստոնեային, թիւրքին ու հայուն միջև: Ու տակաւին կառավարութեան բերանն եղող կէս-պաշտօնական և ոչ-պաշտօնական թիւրք թերթեր կը ճգնին ու կը ջանան համոզելու քաղաքակիրթ աշխարհը՝ թէ Տաճկաստանի մէջ ամէնուրեք ի գործ կը դրւին արդարութիւն ու հաւասարութիւն, թէ չկայ խտիր մահմէտականին ու քրիստոնեային միջև, և „Թանի“ պէս թերթեր, կաշառւած շատ անգամ, ճշմարտութիւնը կը պղծեն և ստայօդ լուրերով կ'ուզեն հասարակութիւնը խաբել եւն եւն:

Մեր վիճակը դառնագոյններուն դառնագոյնն է. ընդհանրապէս մենք բանտին մէջ տւայտանքէ զերծ կ'ըլլայինք, և, ի մասնաւորի, մեր բերդարգել ընկերները բերդաքաղաքին ներսը ազատ թողւած, եթէ պատրիարքը ունենար քչիկ մը խիղճ ու գութ:

Քանի մը խօսք ալ Օրմանեանի մասին:

Մենք, թէ ուղղակի և թէ կողմնակի միջոցներով, քանի քանի անգամներ գրեցինք պատրիարքին և նկարագրելով մեր անտանելի կացութիւնը, խնդրեցինք անոր միջամտութիւնը ընդհանրապէս մեր օրհասական վիճակի բարւոքման և ի մասնաւորի, մեր բերդարգել ընկերներուն՝ բանտէն դուրս, բերդաքաղաքիս ներսը ազատ թողելուն մասին: Շատերը մեզ հաւատացուցած էին՝ թէ Օրմանեան արդէն իսկ հոգածութեանը առարկան ըրած էր մեր վիճակը, և առ այդ թագրիրներ տւած էր արդարութեան նախարարութեան և նամակներ գրած կուսակալութեան: Թագրիրներու, նամակներու ի՞նչ հարկ կար. նա շնորհ մը չպիտի խնդրէր, նա պիտի պահանջէր միայն օրէնքին գործադրութիւնը. երբ կուսակալ մը թիւրք բերդարգելը բանտին մէջ պահել չէր ուզեր, նոյնպէս ալ պատրիարքը մը կրնար պահանջել, որ հայ բերդարգելը բանտէն հանւէր, առոր համար ալ թագրիր մը միայն բաւական էր: Հետեւաբար, մենք կ'ըսենք, թէ սուտ էր Օրմանեանին զանազան մարդոց հասցէին գրածները: Ընդունելով, սակայն, որ իսկապէս տրւած ու գրւած ըլլան այդ թագրիրներն ու նամակներն, ի՞նչ կը կարծէք որ ըլլան անոնց բովանդակութիւնները. անկասկած, բանտերէն չհանել հայ բերդարգելները և ճնշել, նեղել առհասարակ հայ քաղաքական դատապարտեալները բանտերու մէջ: Ուրիշ կերպ կարելի՞ է մեկնել, երբ կը տեսնենք խոտորնակ համեմատութիւնը մեր դիմումներուն, աղաչանքներուն և անոնց հետեւանք եղող չարաչար տւայտանքին. երբ կը տեսնենք երկրաչափական յառաջդիմութիւնը դէպի վատը մեր վիճակին, դէպի քայքայումն ու կործանումը մեր կեանքերուն, երբ կը տեսնենք այն ընթացքը, զոր ցոյց տւած է Օրմանեան՝ հանդէպ մեր ծերունի, կորաքամակ մայրերուն: Խեղճ կիներ, որոնք, երբ արտասւաթոր աչքերով ծնրադրած առջին, կառչած քղանցքին, կուլային ու կ'ողբային, և իրենց դատապարտւած որդւոց անտանելի և օրհասական վիճակին բարւոքումը կը խնդրէին, նա, անզգայ ու անկարեկիր, կ'արտաքսէր զանոնք իր քովէն ըսելով. „Հեռացէ՛ք, կորէ՛ք, ինչո՞ւ եկեր գլխ անհանգիստ կ'ընէք. ձեր տղաքը լիրբեր են, քիչ իսկ է անոնց տրւած պատիժը, անոնք պէտք է մնան բանտերու մէջ, չարչարւին ու նեղւին, որպէս զի զգաստանան. համարեցէք թէ յիմարներ են, յիմարանոցը տարւած եւն եւն“: Օրմանեան աւելի անխիղճ եղած է, քան Քրիստոսի յիշած այն անգութ դատաւորը, որ թէև „յԱստուծոյ ոչ երկնչէր, և ի մարդկանէ ոչ ամաչէր, այլ վասն աշխատ առնելոյ այրւոյն, արար նմա դատաստան“:

Ինչպէս երբեմն բաւեցաւ մէկուն համար թէ՝ մթին գիշեր մը, ձեռքը կանթեղ մը բռնած, մտնելով գերեզմանատունը, որ լի էր նոր ու անթաղ մեռելներով, վայրագ հաճոյքով մը կը դիտէր դիակները, և ի վարձատրութիւն գործած նախճիրներուն, մեռելներուն գրպաններէն կը փնտռէր շքանշաններ, պատւանշաններ. մենք ալ այժմ կ'ըսենք Օրմանեանի համար թէ՝ նա, ի լրումն իր վայրագ հաճոյքին և ի վարձատրութիւն հայ քաղաքական բանտարկեալները բանտերու մէջ տառապեցնելուն և սպանել տալուն, կուզէ պարարել փորն ու քսակը, կուզէ շքանշաններով, պատւանշաններով զարդարել կուրծքը:

Այո՛, թող ցնծայ ու բերկրապատառ հրճւի Օրմանեան. ահա մենք կը պատրաստւինք տակաւ հրաժեշտ տալ կեանքին և երթալ նետւիլ գիրկը սեւ փոսին. բայց թող լաւ գիտնայ նաեւ Օրմանեան, որ կ'ուզէ հաստատել իր գահը մեր կմախք-

ներուն վրայ, մեր ուրուականները պիտ՚ունենայ աչքին առջև շարունակ։

Այս նամակն ալ թերևս վերջինը ըլլայ․․․

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՆԵՐ

Ապրիլ, 1905

....

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌԵՖՕՐՄՆԵՐ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, 4 | 17 սեպտեմբերի

Ռեֆօրմների շրջան է։ Մայրաքաղաքում տեղի ունեցած յունուարի 9-ի դէպքերը մի շարք արձագանքներ ունին Ռուսաստանի բոլոր ծայրերում և զանազան մասերի ազգաբնակութեան յեղափոխական տրամադրութեան համեմատ՝ թոյլ կամ ուժեղ կերպով արտայայտուեց շարժումը։ Մի տեղ արիւնոտ ընդհարումներ ոստիկանութեան և զօրքի հետ, մի ուրիշ տեղ ցոյցեր՝ „կորչի՛ միապետութիւնը“ աղաղակներով, մի երրորդ տեղ քննադատական ճառեր և այլն։ Շարժումը այնքան ընդարձակուեց, որ վարակեց նոյնիսկ դպրոցների մանուկներին, որոնք նոյնպէս մասնակցութիւն ունեցան ընդհանուր բողոքին։ Իսկ պատերազմը օրաւուր աւելի նիւթ ու կրակ էր տալիս բողոքի արտայայտութիւններին։ Երկիրը ամբողջապէս բորբոքւում էր հրաբուխի նման, բայց այս բոլոր շարժումների մէջ տարաբախտաբար, ռուս մասսան էր, որ անշարժ մնաց, չը հասկանալով, որ ինքն է երկրի տէրը, իր ձայնն է, որ վճռական արժէք պիտի ունենայ...

Հոսած արեան դիմաց՝ կառավարութիւնը անկարող էր անտարբեր մնալ. նա զգաց, որ անհրաժեշտ է մի բան անել ժողովրդի միահամուռ պահանջին բաւարարութիւն տալու համար, նա հասկացաւ, որ պէտք են ռ ե ֆ օ ր մ ն ե ր, որոնք երկրի հիմնական կարգն ու կանոնը փոխէին և, միւս կողմից, ժողովրդի աչքին գեղեցիկ նորութիւն երևալով, առժամանակ հանգստացնէին ժողովրդին, մինչև պատերազմը վերջանար, այնուհետև ներքին թշնամուն արեան մէջ խեղդելը հեշտ էր...

Եւ ահա ծանուցեցին մի շարք „ռեֆօրմներ“—պետական դումա, համալսարանական ինքնավարութիւն, մամուլի և հաւաքումների ազատութեան խնդիր, ներքին նահանգների զեմստուօների նախկին իրաւունքների վերականգնման հարց, մայրենի լեզուով նախնական դպրոցներ՝ ոչ ռուսների համար, Կովկասում զեմստուօ մտցնելու հարց և այլն և այլն։

Բայց Ռուսաստանում ոչ մի բան չի կատարւում կ ա տ ա ր ե ա լ կերպով։ Ամեն ինչ՝ կիսատ-պռատ, կարկատած, կրճատուած, սահմանափակուած։ Ի՞նչ նշանակութիւն ունին այդ ռեֆօրմները, երբ մարդիկ իրաւունք չունեն հաւաքուել այդ հարցերի մասին խորհրդակցելու, երբ ոստիկանութեան խնամակալութիւնը անպակաս է ժողովրդի գլխից, երբ անհատի և բնակարանի անձեռնմխելիութիւն չը կայ։ Սրանք անհրաժեշտ պայմաններ են որևէ ռեֆօրմի կենսունակութեան համար. թէ չէ բիւրոկրատական կաբինետներում գաղտնի մշակուած, առանց ժողովրդի ներկայացուցիչների մասնակցութեան անդամ, և կայսերական մանիֆեստների ու ուկազների ձևով հրատարակուած այս օրէնքները, իրենց վրայ կրելով մ ի ա պ ե տ ո ւ թ ե ա ն ա ն խ ա խ տ պ ա հ պ ա ն մ ա ն էական հանգամանքը, արդէն սկզբից մեռելութեան են դատապարտում այդ բոլոր օրէնքներն ու նախագծերը, որոնց հետ ժողովուրդը չի կապւում, որովհետև նրանից չեն բղխած, նրա կարիքներին գոհացում չեն տալիս։ Նրանց ռեալականութիւնն իսկ կասկածելի է, որովհետև այս բիւրոկրատական կառավարութիւնը իր նեղ դրութիւնից ստիպուած՝ անում է այդ quasi-զիջումները. վաղը մի նոյնպիսի ուկազով կ՚ոչնչացնէ այսօրուայ տուածը։ Նոյն բանը չը կատարուե՞ց 60-կան թւականների ռեֆօրմների վերաբերմամբ, որոնք այժմ կամ բոլորովին չքացել են, կամ ծաղրելի կմախքի աստիճանի հասել։ Կառավարութիւնը, սնանկացած վաճառականի նման, իր վարկը կորցրել է ժողովրդի աչքում։ Միակ միջոցը, որով հնարաւոր է վստահութիւն ներշնչել, այն է՝ որ ներկայիս բիւրօկրատական կազմը փոխարինուի ընդհանուր ազգաբնակութեան կողմից բոլորի հաւասար գաղտնի և ուղղակի ձայնատուութեամբ ընտրուած կազմով։ Դրա համար հարկաւոր է, որ գումարուեն և ընդհանուր Ռուսաստանի և նրա զանազան մասերի սահմանադիր ժողովներ, որոնք իրենց ձեռքն առնէին կառավարութեան ղեկը։

Ժողովրդի յայտնած այդ որոշակի պահանջին՝ կառավարութիւնը վճռել է դիմադրել բոլոր միջոցներով։ Այդ ձըգտման մի հետևանք էր նաև օգոստոսի 29-ին Թիֆլիսի քաղաքային տան մէջ պատահած արիւնալի դէպքը, որի արդիւնքը եղաւ՝ հարիւրաւոր դիակներ ու վիրաւորներ, մեծ ու փոքր, կին ու երեխայ։

Դէպքը այնքան ծանօթ է, և նոյնիսկ ռուսական պաշտօնական հաղորդագրութեան մէջ այնքան քաշուելի կերպով աչքի զարնող, որ ես մանրամասն չեմ նկարագրի, այլ միայն կանգ կառնեմ մի քանի բնորոշ գծերի վրայ։

Պետական դումայի և մտցուելիք զեմստվոյի մասին՝ Կովկասի զանազան քաղաքներում խորհրդակցութիւններ էին լինում լինելիք ռեֆօրմների վերաբերմամբ։ Խորհրդակցութիւններին շատ տեղերում գնում էին նաև յեղափոխական տարրեր՝ ժողովրդական ճշմարիտ պահանջները լսեցնելու, առաջարկած ռեֆօրմների իսկական պատկերը ցոյց տալու և նրանց կեղծ ու պատիր նշանակութիւնը աշկարայ դարձնելու համար։

Ռուս կառավարութիւնը վաղուց սովոր է, որ ժողովուրդը աւելին է ըմբռնում, քան թէ նրան տալիս է Պետերբուրգը, որ նա այլ կերպ է գրում խօսում, քան թոյլ է տալիս ցենզուրը, այլ կերպ է դատում ու վարւում, քան թոյլատրում է պօլիցիական լօգիկան։ Բայց յեղափոխականը դրանով չի գոհանում, նրան ազատ օդ է հարկաւոր շնչելու համար, նրան ազատ խօսք ու մամուլ է հարկաւոր՝ ժողովրդական իսկական շահերը պաշտպանելու համար, և նա լաւ գիտենալով այն ռիսկը, որին ենթարկւում է հրապարակային ժողովներում խօսելիս, ուր վխտում են ամեն կարգի լրտեսներ, այնուամենայնիւ ամեն մի յարմար դէպքում հրապարակ է գալիս իր բողոքով, իր պահանջներով։ Այդպէս և դումայի նիստերին, խորհրդակցութիւնների ժամանակ, գալիս է ժողովրդականը՝ ճշմարիտ ներկայացուցիչը և յայտնում իր բողոքն ու պահանջները։ Պօլիցիան և բուրժուան չեն կարող այդ լսել. նրանք կամ հեռանում են ժողովից կամ ուժի դիմում։

Այդպիսի դէպքեր տեղի են ունեցել մի քանի անգամ, թէ Թիֆլիսում և թէ գաւառական քաղաքներում։ Դըրանց վերջաբանը եղաւ Թիֆլիսի դումայի արիւնոտ ողբերգութիւնը, օգոստ. 29-ի երեկոյեան, ժամը 9-ին։

Օրը երկուշաբթի էր։ Դումայի դահլիճը ներս էր խուժել մի մեծ բազմութիւն բանուորներից և հետաքրքրուող ունկնդիրներից։ Այդ օրը, հակառակ սովորականի, Դուման իր հերթական նիստը չունէր, բայց ներսինները իրենց միջից նախագահ ընտրելով՝ սկսել էին խօսել այրող հարցերի մասին։ Այնուհետև պատկերը նոյնն է, ինչ որ սովորաբար լինում է այսպիսի դէպքերում։ Ցրուելու պահանջ ոստիկանութեան կողմից, նոյն պահանջը՝ զօրքի գլխաւորի կողմից և ապա հրացանաձգութիւն ու կոտորած... 100 կ զակ մասնակցում են կոտորածին. այս պատահարի առանձնայատկութիւնը հէնց այն է, որ սա մի կոտորած էր և ոչ թէ „խռովարարներին ցրուելու“ միջոց։ Ասում են, որ առաջին ատրճանակի հարուածը եղել է ժողովրդից, որից ծանր վիրաւորուել է մի կ զակ։ Եւ ահա սկսւում է հրացանաձգութիւնը կ զակների կողմից. կէս ժամ շարունակ նրանք զարկեր են տալիս թէ դահլիճի ներսում, թէ շէնքի միւս մասերում, թէ հրապարակից լուսամուտներով դէպի ներս, թէ ելքի մօտ։ Պարզ նկատւում էր ձգտումը՝ ոչնչացնել բոլոր նիստը հաւաքուածներին, ով որ էլ լինեն նրանք։ Այդ պատճառով հնարաւորութիւն չէին տալիս ներսից դուրս գալու, կոտորում էին ով ձեռքներն էր ընկնում զանազան անկիւններում, սանդուղքների վրայ, միջանցքներում. իսկ մի խումբ կօզակներ, կանգնած ելքի մօտ, զարկեր էին տա-

լիս դուրս փախչողների վրայ։ Դա բաւական չէր. փողոցներում և հրապարակում վտանգաւոր էր թէ փախչելը և թէ կանգնած մնալը. երկու դէպքում մարդիկ ճանաչւում էին իբրև խռովարար և զնդակահարւում։ Կոզակները մեծ հաճոյքով ու յաղթականօրէն պատմում էին, թէ ինչպէս իրանք փախչողների եաւից նշան էին դնում և գետին փռում։ Վիրաւորածներից նրանք, որոնց աջողւում էր մատակայ մի տան մէջ ապաստանել, դարձեալ ազատ չէին կոզակներից, որովհետև վերջիններս նրանց եաւից ընկած՝ մտնում էին նոյնիսկ տները։

Կէս ժամւայ մէջ Դումայի շէնքը, հրապարակը և շրջակայ փողոցները ու տների բակերը ապանդոնի վերածուեցին։ Ամեն տեղ թափուած դիակներ և վիրաւորներ արնաքամ էին լինում։

Հետևեալ օրը ի հարկէ դուրս եկաւ կառավարչական հաղորդագրութիւնը, որով գեներալ նահանգապետը ճգնում էր մեղքը գցել քաղաքագլխի վրայ, իսկ զոհերի թիւը ամենանպատակաւոր կերպով իջեցնում էր մինչև 23 մեռածի և 50 վիրաւորի, այնինչ ճշմարտութիւնը եռապատիկն է։

Իբրև բողոք այս դէպքի առիթով, սեպտ. 1-ին ամբողջ քաղաքը գործադուլ էր տրել նոյնիսկ այնպիսի հիմնարկութիւններ, ինչպէս քաղաքային վարչութիւնը, բանկերը և այլն։ Զարճարանները անգամ փակ էին։ Քաղաքային վարչութիւնը հրաժարականի խնդիր է յարուցել։

Կոզակը իր արիւնոտ գործը կատարելուց յետոյ՝ իրեն վարձատրելու մասին էլ է մոռացում։ Նոյն գիշերը սկսեց կողոպուտը. փողոցում պատահած մարդկանց—մէկի ժամացոյցը, մէկի քսակը, մէկի մատանին՝ անցնում էին կոզակների ձեռքը, որոնց սպառնալիքի ազդեցութեան տակ։

Իբրև լրացումն՝ մի քանի օր յետոյ հրապարակ եկաւ Կովկասի փոխարքայի դիմումը „Կովկասեան ազգաբնակութեան“, ուր պալատական խոռների նախկին կառավարիչը թափում է իր թոյնը յեղափոխական կոմիտէների և գաղտնի ագիտացիայի վրայ, զգուշացնում է ժողովուրդներին և ծանուցանում նրանց նոր աւետարեր արքայական „ռէֆորմների մասին, որոնք շուտով պիտի բերեն Կովկասին խաղաղութիւն ու երջանկութիւն...

Այդ դիմումը մի տեսակ ազդարար է գալիք սարսափելի հալածանքների... Անհնար պիտի կռւեն յեղափոխութեան դէմ. պիտի խփեն հային, վրացուն, ռուսին. բանւորին, ինտելիգենտին... Կովկաս է գալիս 60,000 զօրք, իբր թէ մահմէդականներ չ՚ուզենալու կարծես քիչ են եղած զօրքերը, կարծես, յիրաւի, անզօր են նրանք թուրք հրամանների դէմ...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐԳԱՐ ԺԱՄՀԱՐԵԱՆ

(ՄՈՒԱՒ)

Այն հսկայական ու արիւնոտ տրագեդիան, որ ռուս կառավարութեան կամքով և թաթար ժողովրդի շնորհիւ այժմ ալեկոծում է մեր դժբախտ երկիրը, ընդհանուր չարիք լինելուց զատ՝ նաև բազմաթիւ մանր ու մեծ աղէտաւոր անցքերի մի անհատնում շղթայ է։ Ո՞վ կարող է երբևիցէ հաշիւ առնել արցունքի կաթիլները, որոնք թափւում են մռայլութեան ու խաւարի մէջ, ո՞վ կարող է չափել մութ ցաւերի խորութիւնը, որով տապակւում են այնքան աւերակ ու անյայտ հոգիներ վատաբախտ երկրի մի ծայրից միւսը։

Անհատների ցաւը, ինչպէս և նրանց կրած զոհը սովորաբար մոռացւում է ամբողջութեան մէջ, մնում են միայն այն պայծառ դէմքերը, որոնք հրապուրիչ առանձնութեամբ բարձրանում են տառապանքի մրրկայոյզ ծովի մակերևոյթից վեր, փայլ են տալիս խեղդող իրականութեանը և բնորոշում են անցքերն ու ժամանակը ո՛չ միայն իրանց կեանքով, այլ և մահով։

Այդպիսի մի դէմք էր Մարգար ժամհարեան, որին վիճակւած էր իր ծննդավայր՝ Շուշին, վերջնական աւերից ու անարգանքից ազատելու պայքարի մէջ՝ ընկնել թաթար մարդասպանների գնդակից։ Այդ անունը՝ Մարգար ժամհարեան՝ շատ քիչ էր ծանօթ հայ հասարակութեան լայն խաւերին. նա սիրելի էր միայն շատ մօտիկ ընկերների, զինակիցների, համախոհների նեղ շրջանում, ուր նա մի առանձին մուտք ու թով-

չութիւն ունէր։ Եւ սակայն երբ յանկարծական ու կանխահաս մահը եկաւ մշուշապատելու նրա ուխտաւածի հայեացքը, եկաւ և կնքելու այդ կարճատև, բայց հարուստ ու խիզախ գոյութիւնը գերագոյն պայքարի վայրկեանում. նա անցաւ թողնելով իր ետևում մի գատարկութիւն, որ էլ չեն կարող լցնել ո՛չ խորին կսկիծն ու ցաւը, ո՛չ ընդհանուր արցունքն ու ափսոսանքը։

Ուխտաւածներից մէկն էր նա, որոնցով այնպէս հարուստ է մեր նորագոյն արհաւրալից կեանքը։ Դեռ փոքրիկ դպրոցական, մի անգամ ուսուցիչը նրա խիզախ ու ըմբոստ բնաւորութեան համար ասաց՝ „Մարգար, դու կախաղանի վրայ կը մեռնիս“. անողորմ մարգարէութիւն, որ փոխւեց ու այնպէս վաղ իրականացաւ թաթար խուժանի գնդակների տարափի տակ։ Պատանեկան հասակից նա ջերմ հայրենասէրի և ուժեղ ռազմասէրի տեմպերամենտ էր ցոյց տալիս։ Բէալական դպրոցը աւարտելուց յետոյ, նա, կարծես կանխատեսելով խռովայոյզ ապագան, անցաւ Պետերբուրգ և կամաւ մտաւ զինուորական ծառայութեան ու դարձաւ ենթասպայ։ Այնուհետև մենք նրան տեսնում ենք Գերմանիայում, ուր երկու տարի սովորում է հասարակական գիտութիւններ. բայց հայ ժողովրդի մէկը միւսին յաջորդող դժբախտութիւնները չեն թողնում հանգիստ այդ երիտասարդի ուժեղ և յափշտակող հոգին. նա կիսատ ձգեց ուսումը, վերադարձաւ Կովկաս։

Հայաստանն ու տառապող հայութիւնը մօտիկից տեսնելու տենչը այնքան մեծ էր նրանում, որ արդէն

այդ ժամանակից նա Թիւրքիա անցնող հայ կամաւորներին միանալու լուրջ մտահոգութեամբ է բռնուած։ Սակայն միևնոյն ժամանակ Կովկասում շնորհիւ Գօրիցինի հայակեր քաղաքականութեան, շշմեցնող արագութեամբ հարուածները թափւում են ռուսահայ ժողովրդի գլխին, արիւնաքամ անելով այնքան սրտեր, զայրոյթով ու թոյնով լցնում այնքան հոգիներ։

Սկսւում է ժողովրդական շարժումը և ըմբոստների առաջին շարքումն է Մարգարը այդ անհաւասար կռուի մէջ, որ մի բուռն հայութիւնը ստիպուած էր մղել ռուս ոճրագործ ադմինիստրացիայի հրէշաւոր կամայականութիւնների դէմ։ Եւ վերջին 2, 3 փոթորկոտ տարիներում շատ քիչ կան վտանգաւոր յեղափոխական ձեռնարկներ, սկսած խոշոր տերրօրներից մինչև իւրայիններին պատժելու խիզախութիւնը, որոնց այսպէս թէ այնպէս մասնակցած չը լինի այդ հազւագիւտ երիտասարդը։ Նա մարմնացած խանդ է, գաղտնի ժողովների ոգին ու կենդանութիւնը. ծայրայեղ համարձակութիւնը վտանգի առաջ մղումն էր տալիս ամենազգոյշներին անգամ, իսկ իր գործնական խելքը, միացած բացարձակ գաղտնապահութեան, իր համեստութեան և պարզութեան հետ, նրան դարձնում էին յեղափոխութեան լաւագոյն, անփոխարինելի գործիչներից մէկը։ Նա սիրելի էր ամենքին ո՛չ միայն իբրև աչքի ընկնող յեղափոխական ուժ, այլ և իր հազւագիւտ քնքոյշ բնաւորութեան համար։ Զարիքի հանդէպ ամենաանողորմ ծրագիրներ կազմող Մարգարը երևելի զգայնութիւն ունէր։ Արդարև, քիչ անգամ արտաքին ձևերի մի փոքր կոշտ պարզութեան, լեզուի խստութեան տակ ծածկուած է լինում միայն նուրբ ու զգայուն հոգի։

Եւ երբ հայ ժողովրդի գոյութեան սպառնացող վտանգը դիմագրաւելու համար կազմւում է ինքնապաշտպանութեան Ռազմիկ կոմիտէն՝ Մարգարը նրա ամենագործունեայ, ամենաըմբոստ անդամն է։ Նրա կեանքի այդ շրջանը մի կատարեալ փոթորիկ է, նա դադար ու հանգիստ չ՛ունի, նրա բնակարանը բոլոր պայքարողների, բոլոր ազատասէր ոգիների ժամադրավայրն է. իր յանձն առած գերին կապած վտանգները նրան և ո՛չ մի վայրկեան չեն ընկճում, ժպիտն ու կատակները շրթունքին, հեգնութեամբ թուլութեան առաջ միշտ ւպատրաստ, նա շարունակում է իր ընկերներին մղել դէպի ամենավտանգաւոր ձեռնարկներ, մինչև կը յաղթանակի արդարութիւնը, մինչև կը խորտակւի բռնութիւնը, որ աւաղ, նրան վիճակուած չէր տեսնել։

Սկսեցին Կովկասի թաթարական բարբարոսութիւնները։ Ռուս կառավարութիւնը մի գժոխային ծրագրով ամբողջ թուրքութեան հետ կանգնեց հայութեան դէմ։ Մարգարը չը կար, նա Բագուի փետրւարեան անցքերից առաջ արդէն ճանապարհւել էր Թիւրքիա։ Այնտեղի հայութիւնը տեսնելու նրա հին երազը մի բախտաւոր դիպուածով իրականացել էր։ Նա այցելեց Կարին Մուշ, Բիթլիս, և պատրաստւում էր Սասուն անցնել, երբ Թիւրք կառավարութիւնը փակեց ճանապարհը։ Մարգարը նորից Կովկասումն է, ուր արիւնը հոսում է և աւերածն ու մահն է իշխում։ Երևանի, Նախիջևանի դէպքերից յետոյ հերթը Շուշիինն էր, ուր Թուրք և ռուս ագենտները ծրագրում էին հայերի ջարդը։ Մարգարը յայտնւեց Շուշում. պէտք էր կազմակերպել հայրենի քաղաքի ինքնապաշտպանութեան գործը. թաթար խուժանը կամաց-կամաց դառնում էր յանդուգն և անամօթ։ Փոթորիկը մօտ էր և նա պայթեց օգոստոսի 17-ին։ Կովկասեան և ո՛չ մի քաղաքում հայ թուրքական ընդհարումը այնքան կատաղի և այնքան արիւնահեղ եղաւ, ինչքան Շուշում. Մարգարն իր խմբով երկու օր շարունակ հրաշքներ գործեց և ի վերջոյ զոհ գնաց իր վաղեմի համարձակութեանը, երբ քշելով թուրքերին, խիստ առաջացաւ նրանց թաղերը, և ընկաւ, հերոսի մահով, գնդակը ճակատից ընդունելով։

Ընդամենը քսանութ տարեկան էր նա և... էլ չը կայ։

Արտասուելի հակասութիւնը կեանքի... Մի գժբախտ թաթար, նախնական ու արիւնարբու բնազդներով հարուստ մի խաւար գլուխ ամբոխային խենթ կատաղութեան վայրկենում խլում է մի գոյութիւն, որ ամբողջապէս լոյս է ու էներգիա, հաւատ ու արիութիւն, իդէալ ու յարատև ճիգ մեծ գաղափարների համար, որոնք հաւասարապէս թանկ պիտի լինէին և՛ հային և՛ թուրքին։ Այսպիսով թաթարական համայնատարած եղեռնի մէջ այդ մահը ինքնին մենակ մի մեծ եղեռն է, ինչպէս և ցաւագինօրէն յուզիչ մի պատկեր հայի և իր բարբարոս ու արիւնարբու հարևանների մէջ յեղյեղող հրէշաւոր պայքարի։

Մեր կրած զոհերի մեծութիւնը թող աւելի բուռն, աւելի ուժգին դարձնէ մեր մղելի պայքարը։ Ի՞նչ անենք. պատմական ճակատագրի հայ ժողովրդին շպրտած մարտահրաւէրն է, որից խուսափել անկարող ենք։ Հին վիհն է այն, ուր թաղւել են այնքան գեղեցիկ գոյութիւններ և նրանց յետևից նա, Մարգար Ժամհարեան։ Յաւիտենական յարգանք քեզ, ըմբոստ և ազնիւ հոգի, տառապող ժողովրդի դու արիասիրտ ու ազնիւ զաւակ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կովկասեան մեր մարմինները հաղորդում են մեզ քանի մի ցաւալի ընդհարումների և նոյնիսկ սպանութեան դէպքերի մասին, Զ-ի շրջանում, կուսակցական հողի վրայ։

Թողնելով ուրիշ կազմակերպութիւնների վրայ՝ իրենց արարքների ամբողջ պատասխանատուութեան ծանրութիւնը, մենք մեր կողմից պարտք ենք համարում յայտարարել հետևեալը.

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ բնաւ տրամադիր չէ վատ դասեր առնելու ուրիշներից, միշտ անխնայ է եղել դէպի յեղափոխական դրօշակն անարգող անհատները և առանց վարանումի դուրս է շպրտել այդպիսիներին իր շարքերից։ Դա մի հրամայական պահանջ է ամեն մի կազմակերպութեան համար, եթէ միայն սա չէ ուզում ինքնասպանութիւն գործել։ Դաշնակցական անդամները պէտք է ամեն կերպ խոյս տան արիւնհեղութիւնից, անգամ ամենասուր պրովոկացեաների հանդէպ, այլ և յեղափոխականի հմայքը վրտանգող ամեն տեսակ արարքներից։

Կազմակերպութեան կանոնադրութիւնը, ինչպէս և Ընդհ. Ժողովի ընդունած որոշումները՝ թելադրում են ամենախիստ վերաբերմունք և նոյնիսկ ծանր պատիժ այն անձանց դէմ, որոնք իրենց թոյլ են տալիս դաւաճանել յեղափոխութեան գաղափարին և Դաշնակցութեան սկզբունքներին։

Հ. Յ. Դ. Արևմտեան Բիւրո

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Շուշու Կոմիտէի թռուցիկը)

—

կատարեց այն, ինչ որ պիտի կատարէր անխուսափելիօրէն:

Ղարաբաղի մահմեդականութիւնը յարեց համիսլամական շարժման և մեր հայրենիքը սուզեց նորից խաւար ու խայտառակ միջնադարի մէջ: Մի շարժում, որի միակ գաղափարը ոչնչացումն է ամեն մի քաղաքակրթութեան, որի ղեկավարները բարոյազուրկ գիշատիչ կալուածատէրերն են և որի կրողն է՝ այդ ողորմելի, շարունակ թալանող ու թալանուող մահմեդական ամբոխը:

Հայրենիքի մի ծայրից մինչև միւսը՝ հրդեհում, թալանում և սպանում է թուրքը: Նոյնը անում է և հայը:

Հայը չէր սակայն, որ վառեց քաղաքացիական այս անխնամ ու այլանդակ կռուի առաջին ջահերը:

Հայը չէր, որ իր հարևանի վրայ առաջին հրազէնը պարպեց:

Հարևան ժողովրդին նենգութեամբ ու շողոքորթութեամբ լրտեսող ժողովուրդը մենք չէինք:

Եւ ինչ որ եղաւ, ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետև այդպէս է կամենում համիսլամական վոհմակը:

Վկայ է դրան Շուշու ախուր աւերակույտը: Մխող աւաններն ու քաղաքները, սրախողխող եղած հայ համայնքները, հայ որբուկների և այրիների լացն ու կականը, մեր խլամայած արիւնակիցների տառապանքները՝ վկայ են դրան:

Եւ մարդասպանների ու գողերի այդ շարժումը շատ ու շատ վկաներ պիտի թողնէր դեռ գալիք սերունդին, մեր թշուառութիւնը անծայր պիտի լինէր և մեր լքումը սոսկալի, եթէ մահմեդական վոհմակի դիմաց չկանգնէր մի ոյժ և խրոխտ ու արիաբար չկոչէր նրան՝ „էլ բաւակա՛ն է:“

Ո՞վքեր էին այդ ոյժը:— Նրա՞նք, որոնք կնաբար իրենց փրկութիւնը ռուս զօրանոցի մէջ փնտրեցին:

Նրա՞նք, որոնք հարևանի ամբողջ գոյութիւնը փրկելու փոխարէն իրենց ողորմելի փալասները փրկել գերադասեցին:

Կամ գուցէ նրա՞նք, որոնք հրդեհի միջոցին հայ արիւնակցի վերջին ունեցածը թալանելու քաջութիւնն ունեցան...

Դ ա շ ն ա կ ց ո ւ թ ի ւ ն էր այդ ոյժը:

Այն Դաշնակցութիւնը, որ հինգ օր շարունակ Շուշու ահռելի պատերազմը մղեց առանց որ և է խրախուսանքի և օգնութեան՝ լեղապատառ եղած քաղաքացիների կողմից, որը հինգ օրուայ ընթացքում հինգ ժամ քուն ու հանգիստ չունեցաւ:

Այն Դաշնակցութիւնը, որի վրայ էր ծանրացած այդ հինգ օրուայ ե ռ ա կ ի կռիւը թուրք խուժանի, քաղաքը լափող հրդեհի և քաղաքացիների վրդովեցուցիչ անտարբերութեան դէմ և որը այնքան պատուաւոր կերպով դուրս եկաւ այդ եռակի կռւից:

Այն Դաշնակցութիւնը, որը իր շարքերում ունէր Մ ա ր գ ա ր և Լ և ո ն և Ի շ խ ա ն և Շ ա մ ի ր, և ուրիշ շատ ու շատ անանուն ու անհռչակ հերոսներ, որոնք հայ ժողովրդի համար մեռնել կամեցան:

Եւ այժմ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը գալիս է յայտարարելու Ղարաբաղի ժողովրդին ի գիտութիւն, որ նոյն ուժը որոշել է այսուհետև ևս ինչ գնով էլ որ լինի, պաշտպանել հայ ժողովուրդը թուրք խուժանի յարձակումներից և պատժել խստօրէն իսլամական ամեն մի անիրաւութիւն:

Աւերակների վրայ թառած, բուերի նման, էլ չ'ողբանք մեր կորուստները: Մեր սիրելիների արիւնով ոռոգուած հայրենիքը, այն երկիրը, ուր պիտի հաստատենք մեր բախտը և ապագան, չը թողնենք վատաբար և օտարութեան մէջ երջանկութիւն չը փնտրենք:

Յարենք իրար և կազմակերպուենք, որպէսզի դիւրութեամբ դիմագրաւենք մեր յիմարացած հարևանների յարձակումներին:

Դէ՛պ ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ի ւ ն, ուրեմն, Ղարաբաղի հայ ժողովուրդ, յանուն քո պատուի, յանուն քո ապագայի, քո բոլոր քաղաքական և հասարակական ի դ է ա լ ն ե ր ի:

1905 սեպտեմբեր

Հ. Յ. Դ. ՇՈՒՇՈՒ ԿՈՄԻՏԷ

ՄԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

—

Բոլոր աշխատանքները նաւթային շրջանում չը պիտի վերսկսուին, մինչև որ գոհացում չը տրուի բանուորների հետևեալ պահանջներին.

1) Շարունակել վճարել ռոճիկները ծառայութիւնը չը ձգած բոլոր բանուորներին մինչև աշխատանքների վերսկսումը:

2) Ֆիրմաները չը պէտք է հեռացնեն իրենց բանուորներին. իսկ ժամանակաւորապէս տուն գնացողներին պէտք է արձակուրդ տան, սակայն երեք ամսից ոչ աւելի ժամանակով՝ նրանց ռոճիկները վճարելու պարտաւորութեամբ:

3) Գնացողներին և նրանց ընտանիքներին տալ ձրի տոմսակ մինչև իրենց գնալու վայրերը:

4) Բանալ ձրի ճաշարաններ բոլոր կարօտ բանուորների համար, ինչպէս նաև հանրամատչելի ճաշարաններ՝ ընդհանրապէս բանուորների համար:

5) Տալ բնակարան այն բոլոր բանուորներին, որոնք մնացել են անապաստան:

6) Ձեռնարկել հանրային աշխատանքների:

7) Բանուորների այրուած և կողոպտուած գոյքի արժէքը պէտք է վճարէ գանձարանը:

8) Վերացնել զինուորական դրութիւնը:

9) Զինել բանուորներին:

10) Վերակազմել ոստիկանութիւնը, հեռացնելով բոլոր թուրք պաշտօնեաներին, ինչպէս նաև հայերին, եթէ այդպիսիք լինին:

11) Անյապաղ և անպայման կերպով վերջ տալ կապալառուների (փոդրաթչիների) միջոցով կազմակերպուած պահապան խմբերի սիստեմին:

12) Նաւթային շրջանի սահմաններից դուրս հանել Բալախանի, Սաբունչի, Զաբրատ, Ռամանի, Քիշլի և Շիխօվօ գիւղերի բնակիչներին: Տալ նրանց հող նաւթի շրջանից հեռու վայրերում, վճարելով նրանց այդ տեղափոխութիւնից առաջ գալիք բոլոր վնասները:

13) Ապահովագրել բանուորներին հիւանդութիւնների, աշխատանքի մասնակի կամ կատարեալ անընդունակութեան և մահւան դէպքերում:

14) Հիմնել բանուորական թաղեր՝ օժտուած բոլոր անհրաժեշտ յարմարութիւններով:

Վերոյիշեալ պահանջների իրագործումը ապահովելու համար անհրաժեշտ է.

15) Ազատ իրաւունք ժողովների և համախմբումների:

16) Ազատ իրաւունք գործադուլների:

Հ. Յ. Դ. IX Կ. ԿՈՄԻՏԷ

Բագու, 7 սեպտ. 1905.

ԼՈՒՐԵՐ

„Րէվոլ. Ռոսսիա-ի“ խմբագրութիւնը հաղորդում է մեզ Լեհաստանի Սուվալկեան նահանգի մի խումբ հրէա բանւորներից ստացած հետևեալ որոշումը.

«Մենք, Սոց.-յեղափ. կուսակցութեան պատկանող, Վոլկովիշեան ճիւղի հրէա բանւորներս, յայտնում ենք մեր խորին ատելութիւնն ու զզւանքը միապետական կառավարութեան, որ հանդիսանում է Կովկասում արիւնոտ անցքերի կազմակերպող. մենք միաժամանակ յղում ենք եղբայրական մեր ողջոյնը հայ աշխատաւոր ժողովրդին և ցանկանում ենք, որ նա այդ ծանր փորձութիւններից դուրս գայ աւելի ուժեղացած՝ մեր ընդհանուր թշնամու, բռնապետութեան դէմ կռւելու համար:

Սրա հետ միասին ուղարկում ենք հինգ ռուբլի, որ խնդրում ենք յանձնել Հ. Յ. Դաշնակցութեան»:

Հրէա-բանւորներ, 50 հոգի:

ժընէվի սօցիալիստ կուսակցութեան նախաձեռնութեամբ՝ ամսոյս 3-ին, երեկոյեան, քաղաքիս ընդարձակ ցիրկի սրահում տեղի ունեցաւ միջազգային, վաղուց նմանը չլսուած մի միտինգ, որ դարձաւ մի հոյակապ ցոյց ընդդէմ ցարիզմի և ի նպաստ յաղթանակող Յեղափոխութեան։ Խօսեցին այլ և այլ կազմակերպութիւնների պատգամաւորներ,–շվէյցարացի, իտալացի, ֆրանսիացի, սերբ և այլն։ Ռուսաստանում գործող քաղաքական կուսակցութիւններից խօսք առան՝ Ռուս Սօցիալիստ-Յեղափոխական Կուսակցութիւնը, հրէական «Բունդը» և Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Մօտ 5000 հոգուց բաղկացած միջազգային հասարակութիւնը խոր, երկիւղած ուշադրութեամբ լսեց բազմաթիւ հռէտորներին, որոնք իրենց ճառերի մէջ վեր հանեցին պատմական րոպէի մեծութիւնը, ռուսական բռնապետութեան դժոխային պատկերը, նրա մասնակի տապալումն ու յեղափոխական շարժման նոր պարտաւորութիւնները։ Դաշնակցութեան ներկայացուցիչը, յայտնելով նախ «Դրօշակի» խմբագրութեան և բոլոր հայ յեղափոխականների ջերմ երախտագիտութեան զգացումները հիւրընկալ ու հայասէր ժընէվին,–բնորոշեց իր կողմից վայրկեանի ծանրակշիռ հանգամանքը, մասնաւորապէս հայութեան ճակատագրի նկատմամբ, յիշեցրեց ցարիզմի արտաքին քաղաքականութեան ոճիրները, տաճկահայոց կոտորածը, ապա Կովկասեան դաւերն ու ջարդերը և եզրափակեց, որ հայ արիւնը Տաճկահայաստանում ու Կովկասում դադար կ'առնէ միայն Ռուսաստանի յեղափոխութեան լիակատար յաղթանակով։

Միահամուռ ծափահարութեամբ ընդունեց որոշում, որով միտինգը իր հիացմունքն էր յայտնում ռուսական կայսրութեան յեղափոխական շարժման, շնորհաւորում էր նրա առաջին քայլերը և յորդորում էր՝ շարունակել կռիւը մինչև կատարեալ յաղթանակ։

—

Ցարը ստորագրեց արդէն մասնակի ա մ ն ի ս տ ի ա։ Ներման արժանացան կայսրութեան բոլոր քաղաքական յանցաւորները, բացի այն անձերից, որոնք մասնակցել են քաղաքական սպանութիւնների՝ 1899 թուականից ի վեր։ Լիակատար ներման ծանուցումը, ենթադրում են, որ շատ չի յապաղի։

—

Հեռագիրը հաղորդում է, որ ներկայ Նոյեմբերի 4-ից սկսած՝ Կովկասում սահմանուեց մամուլի կատարեալ ազատութիւն։

—

Մեծ իշխան Վ լ ա դ ի մ ի ր և Տ ր ե պ օ վ, ռէակցիայի պարագլուխները, հրաժարական տւին։

Ն Ւ Ի Ր Ա Տ Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Շ ւ է յ ց ա ր ի ա.—Ն. Մ. 5 ֆր. յօգուտ „Հայ Ուս. Ռազմական Ֆօնդի Կովկասում“ ժընէվի Ուսանողութիւնէն 58 ֆրանք։

Գ ե ր մ ա ն ի ա.—Շարլօթէնբուրգից ձեռամբ Ուսանող Ա. Ի՝ յօգուտ „Հայ Ուսանող. Ռազմական Ֆօնդի Կովկասում“ 24. 13 ֆր.։

Ռ ո ւ ս ա ս տ ա ն.—„ԴՐԱՄ“ կոմիտէն 15,500, Սուվալկի Խաղաղի Հրեայ (5 ռուբլի) 13. 2օ ֆր.։

Ընդհ. գումար 15,600 ֆր. 38 սանտիմ։

Եկեղեցիի Կոմիտէ։

Ազատ Խաղաղի Ենթակոմիտէի 1905 Ապրիլ 1-էն մինչեւ 1 Յուլիս նուէրներ Տ. Փ. 300 ռ. Զախ 120, Խ. Մ. Շ. 100, Ա. Ն. Դ. 20, ամսավճարներ հետեւեալ խմբերից՝ Զինուոր 31, Վարդ 30. 50, Միկադօ 16. 50, Վարդ եւս 38, Զինուոր 23, Բար խմբի հին հաշւից 25. 50, Նուէր Խ. Վարդից 150, Նուէր Բնարից 10, Ենթակոմիտէի անդամներից եւ խմբապետներից 43։ Գումար 907 ռուբ. 50 կոպ.

Մ. Բ-ի Ն. Կոմիտէն՝

1904 թ. Յուլի ից մինչեւ դեկտեմբեր։

Ա. ամսավճարներ Նոմեր 16՝ 2 ռուբ. 37 կոպ., Ն. 12 | 2՝ 4. 75, Հայկաձոր խ. 4. 10, Ա. հար. Դ. տաս. 3. 60, Ա. հար. Զ. տաս. 1. 65, Ա. հար. Ժ. տաս. 1. 50, Ա. հար. ԺԲ. տաս. 2. 25, Նոմ. 31՝ 3, Բարձր Հայկ զին. խ. 5, Նոմ. 68՝ 4, Ն. 62՝ 2, Ն. 69՝ 2, Ն. 41՝ 4, Ն. 42՝ 3. 10, Ն. 43՝ 1. 45, Ն. 44՝ 2. 15, Ն. 45՝ 1. 50, Ն. 46՝ 3. 10, Ն. 48՝ 1. 90, Ն. 54՝ 10. 40, Ն. 51 | 2՝ 3. 90, Ն. 53՝ 6. 50, Ն. 57՝ 1. 90, Ն. 23՝ 10, Լեռն. շրջան. Ազրահիլ խ. 3, Ա. հար. Դ. տաս. 3. 20, Ա. հար. Բ. տաս. 8, Ա. հար. ԺԴ. տաս. 2, Ա. հար. Ա. տաս. 20. 70, Նոմեր 21՝ 36. Ն. 65՝ 2, Ն. 62՝ 2, Ճառագայթ խ. 4. 10, Պարոյր 2. 25, Նոմ. 5՝ | 3՝ 3. 40, Ն. 22՝ 1. 50, Ն. 3՝ 6, Ն. 6՝ 22, եւս 4, Զարեւանդ խ. 24, Ա. հար. Ը. տաս. 6, Նուէրներ Շամիրամ խ. Նորեկ անդ. Նուէր 5. 20, Պ. Ա. Ն. 5, Բաճճի խ. 5, Բաճճի խ. միջոցաւ մի աշրնանակ Մի հին զինուորական տաս. 5, Դաստակերտի եւ Սողոմոնի եղբայրից 53. 05. Հաջի Բաբայի ներկ. 26, 50. Բ ուս. մի խ. օրինող. երեկ. 51. 32, Զ. Մայր խ. երեկ. 26, Սողոմոնի եւ Գասպարի միջոցաւ երեկ. 211 52, Լ. երեկ. 101. 70, Մորուքից 1. 10, Փոքր Զէյթուն խ. 15, Բ. Արծուիր խ. 6, Ազրահիլ խ. 1. 90, Կարմիր Վանք խ. 1903 | 4 թ. անդամվճ. 80, Ա. հար. Բ. տաս. 3. 75, Ա. հար. Է. տաս. 10, Ա. հար. Դ. տաս. 1. 50, Ա. հար. Ե. տաս. 1. 05, Նոմեր 15՝ 3. 80, Ն. 17՝ 10. 30, Ն. 19՝ 4. 27, Ն. 61՝ 5, Ն. 67՝ 6, Ն. 13՝ 3. 99, Ն. 15՝ 4. Ն. 16՝ 3. 90, Ն. 17՝ 8. 50, Ն. 12՝ 6. 65, Ն. 14՝ 10. 05, Ն. 62՝ 2. 50, Ն. 55՝ 3. 60, Ն. 64՝ 3, Ն. 65՝ 2. 50, Ն. 21՝ 36, Ն. 20՝ 3. 80, Ն. 64՝ 3. 50, Ն. 18՝ 2. 27, Ն. 33՝ 6. 10, Ն. 34՝ 4. 30, Ն. 51՝ 3. 50, Ն. 52՝ 6. 50, Ն. 53՝ 7, Ն. 54՝ 10, Ն. 57՝ 2.55, Ն. 60՝ 6, Ն. 51 | 2՝ 4, Ն. 51 | 3՝ 6, Ն. 69՝ 2. 30, Ն. 19՝ 6. 17, Ն. 13՝ 3. 80, Ազգասէր տիկ. խ. 14, Զարգանդ խ. 44, Կուլոլից խ. 10, Բալոյից 5, Լոյս խ. 30, Փինքի ուխտ. հին. հաշիւ 11, Բամմի խ. Կարապետից 2, Ա. հար. Դ. տաս. 4. Ա. հար. Գ. տաս. 3, Նոմեր 31՝ 6. 30, Ն. 38՝ 2. 95, Ն. 32՝ 6. 30, Ն. 67՝ 3. 70, Ն. 16՝ 4. 13, Նուէրներ Նոմեր 19՝ 1. 90, Ն. 12՝ 14. 25, Դուգորայ շրջան Արս. Խորխոռունի խ. 1. 60, Հայ խ. 130 հաս փամփուշտ Թասրոն եղբայր հայ ապակերտական միութեան 26. 72։ Գումար 1229 ռ. 26 կ.

Յունուար 1-ից մինչեւ փետրուար 1ը։

Վանէ Հայկազ խումբ 1903 4 հ. 32. Նուէր Նոր տարի առթիւ Դ. եւ Պ. 20, ա. հարիւրեակ ա. տասնեակ 9. 50, ա. հարիւրակ բ. տասնեակ 3. 75, ա. հարիւրակ դ. տասնեակ դեկտ. ամսավճ. 2. 70, ա. հարիւր. ե. տասն. 3. 20. ա. հարիւր. գ. տասն. 2, բ. հարիւր. բ. յիսնակի Փալալի խ. 903 | 4 թ. հաշիւը 160, Նոմ. 3՝ ա. Մ. խ. 8, Ն. 7՝ 6. 40, Տէրտէրեանից 1904 թ. մնացած 6 ամսուայ հաշիւը 30, Զարեւանդ խ. 5. 60, Զարեւանդ խ. Գոշ 10, Զարեւանդ Բոշ 5, Վերահաս խ. 905 թ. յուն. ամս. 5. 20, Վայ Հայկազեան խ. Օ. Խ, Մկրտչեան 2, Լեռնաստ շր. Ազրայել խ. 2. 30, Մահ կամ Ազատութ. Նուէր Սաշայի միջոցով 6. 30, Մնացորդներից Մ. Ա. Գ. Ա. Մ. Ս. 2-ական ռուբ. եւ Զ. 1. 50, Կ. Ա. 1. 50, Մ. Մ. 3, Միքայէլ Փ. Վայ Հայկ. խ. 4. Սարգ. Հ. Վայ Հայկ. խ. մէջ 10. Շուշանիկ խ. 5. 50, Շուշանիկի միջոցով վիճակախաղ 6. 60, Մ. Ք. տեղակ. կոմիտէ Աւետիս 206. 85, Ն. 11՝ 4. 75, Ն. 13՝ 3. 70, Ն. 17՝ 5. 70, Արշալոյս խ. 31. 65, Ն. 16՝ Հրաբուխ օժ. խ. 9, Ն. 19՝ դեկտ. ամսվճ. եւ Նուէր 6. 22, Ն. 12՝ 3. 32, Ն. 12՝ օժ. 10. 70. Ն. 18՝ 2. 57, Ն. 16՝ 3. 80, Ն. 11՝ 4. 75, Փոքր Զէյթուն խ. 12, Գ. Ի. Թ-եան Նուէր 5, Վրէժ խ. 902–3 թ. հաշիւը 100, 1905 թ. Թ. Ս. տուգանք 50, Ազգասէր տիկ. խ. յուն. ամսավճ. 6. 75, Ն. 37՝ 3. 60,

Գումար 828. 41 կ. *(Շարունակելի)*

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Les plaies du Caucase

par E. AKNOUNI

Բաղկացած 356 երեսից, ՖՐԱՆՍԻՍ դը ՊՐԵՍԱՆՍԷԻ յառաջաբանով և ՊԻԵՐ ՔԻԱՐԻ ներածութեամբ։

ԳԻՆՆ Է 2 ՖՐ.

Դիմել «Դրօշակ»ի խմբագրութեան